ԹԻՐԱԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՐԱԳԱՑՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Սյուզան Հովսեփյան
«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ
www.ngoc.am

«ԴԻԼԻՋԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ (ՖՄՄ) ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ»

ԾՐԱԳԻՐ

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔ, ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԾՈՎԱԳՅՈՒՂ ԵՎ ՍԵՄՅՈՆՈՎԿԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ, ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԴԻԼԻՋԱՆ, ՀԱՂԱՐԾԻՆ, ԹԵՂՈՒՏ, ՀՈՎՔ, ԱՂԱՎՆԱՎԱՆՔ, ԳՈՇ ԵՎ ԽԱՉԱՐՁԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ, ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Արագացված գյուղական գնահատման

ԶԵԿՈՒՅՑ

Վանաձոր, 2026 թ.

ԱՐԱԳԱՑՎԱԾ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ԱԳԳ /RRA) ԶԵԿՈՒՅՑ

Ծրագիր: «Դիլիջան ազգային պարկին հարակից համայնքներում ֆինանսական մասնակցային մոտեցման (ՖՄՄ) իրականացում»

Թիրախային տարածք: Դիլիջան ազգային պարկին հարակից համայնքներ

Իրականացնող կազմակերպություն: «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ

Ամսաթիվ: 31.05.2026թ.

Ծանուցում: «Կենսաբազմազանություն և կայուն տեղական զարգացում Հայաստանում» ծրագիրը ֆինանսավորվում է Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ) կողմից՝ KfW զարգացման բանկի միջոցով: Ծրագիրն իրականացվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության կողմից՝ WWF Հայաստանի հետ համատեղ, որը հանդիսանում է «Կենսաբազմազանություն և հատուկ պահպանվող տարածքներ» բաղադրիչի իրականացման խորհրդատուն: «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ն իրականացնում է Ֆինանսական մասնակցային մոտեցումը Դիլիջան ազգային պարկի հարակից համայնքներում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱՑՎԱԾ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ԱԳԳ /RRA) ԶԵԿՈՒՅՑ 2

1. ԱՄՓՈՓԱԳԻՐ 4

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

3. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 6

4. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊՐՈՖԻԼՆԵՐ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 7
Համայնքների դասակարգման մատրիցա. 10 բնակավայրերը բաժանված են խմբերի (կլաստերների)՝ ըստ իրենց հիմնական ռեսուրսի և էկոլոգիական կախվածության: 7
4.1. Ֆիոլետովո համայնք (վարչական կենտրոնը՝ գ. Ֆիոլետովո) (Լոռու մարզ) 8
4.2. Ծովագյուղ բնակավայր (Սևան բազմաբնակավայր համայնք, Գեղարքունիքի մարզ) 10
4.3. Սեմյոնովկա բնակավայր (Սևան բազմաբնակավայր համայնք, Գեղարքունիքի մարզ) 12
4.4. Դիլիջան (քաղաքային բնակավայր, Տավուշի մարզ, Դիլիջան բազմաբնակավայր համայնք) .. 15
4.5. Հաղարծին բնակավայր (Դիլիջան բազմաբնակավայր համայնք, Տավուշի մարզ) 18
4.6. Թեղուտ բնակավայր (Դիլիջան բազմաբնակավայր համայնք, Տավուշի մարզ) 20
4.7. Հովք բնակավայր (Դիլիջան բազմաբնակավայր համայնք, Տավուշի մարզ) 23
4.8. Աղավնավանք բնակավայր (Դիլիջան բազմաբնակավայր համայնք, Տավուշի մարզ) 25
4.9. Գոշ բնակավայր (Դիլիջան բազմաբնակավայր համայնք, Տավուշի մարզ) 27
4.10. Խաչարձան բնակավայր (Դիլիջան բազմաբնակավայր համայնք, Տավուշի մարզ) 29

5. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ 32
5.2. Համայնքների կողմից նույնականացված առաջնահերթություններ և մարտահրավերներ 41
5.3. Ռեսուրսների օգտագործման սեզոնային և տարածական օրինաչափություններ 41
5.4. Բնապահպանական և կլիմայական ռիսկեր 41
Թիրախային տարածքի ՈՒԹՀՍ (ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և սպառնալիքներ) SWOT Վերլուծություն 42

6. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԻԿՐՈ-ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ 43

7. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 44

8. ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖՄՄ ԴԻԶԱՅՆԻ ՀԱՄԱՐ 45

1. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն զեկույցն ամփոփում է Դիլիջան ազգային պարկին հարակից 10 թիրախային բնակավայրերում (Ֆիոլետովո, Ծովագյուղ, Սեմյոնովկա, Դիլիջան, Հաղարծին, Թեղուտ, Հովք, Աղավնավանք, Գոշ, Խաչարձան) իրականացված **արագացված գյուղական գնահատման (ԱԳԳ /RRA)** արդյունքները:

Գնահատման հիմնական նպատակն էր պարզել թիրախային բնակավայրերի սոցիալ-տնտեսական ներկա վիճակը, բնական ռեսուրսների օգտագործման և կառավարման առանձնահատկությունները, բնապահպանական ռիսկերը, ինչպես նաև վեր հանել համայնքների կողմից առաջնահերթ համարվող խնդիրներն ու հնարավոր միկրո-ծրագրային գաղափարները՝ Ֆինանսական մասնակցային մոտեցման (ՖՄՄ /FPA) մրցույթների հետագա արդյունավետ ներդրման համար:

Հետազոտությունն իրականացվել է որակական և քանակական մասնակցային մեթոդների համադրմամբ (ֆոկուս խմբային քննարկումներ, կիսակառուցվածքային հարցազրույցներ, երկրորդային տվյալների վերլուծություն):

Առանցքային բացահայտումները ցույց են տալիս, որ.

- Բնակավայրերի մեծ մասում հիմնական ապրուստի միջոցը էքստենսիվ գյուղատնտեսությունն է, անասնապահությունը և անտառային/բնական ռեսուրսներից կախվածությունը, ինչը կարող է հանգեցնել կոնֆլիկտի պահպանվող տարածքների (Դիլիջան ազգային պարկ) հետ:
- Գրեթե բոլոր բնակավայրերն ունեն էկոտուրիզմի և կայուն գյուղատնտեսության զարգացման բարձր ներուժ, սակայն ենթակառուցվածքների (ոռոգման և խմելու ջուր, ներհամայնքային ճանապարհներ, գազիֆիկացման բացակայություն որոշ տեղերում) անբավարար վիճակը շատ հաճախ զսպում է այս ներուժը:
- Կանանց և երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացմանը դեռևս ցածր է կամ պասիվ, սակայն նրանք տիրապետում են զգալի ներուժի հատկապես տուրիզմի, արհեստների և մատուցվող ծառայությունների ոլորտում:

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արագացված գյուղական գնահատումը (ԱԳԳ /RRA) հանդիսանում է կարևորագույն նախապատրաստական փուլ «Ֆինանսական մասնակցային մոտեցման (ՖՄՄ /FPA)» մեթոդաբանության կիրառման համար: ՖՄՄ-ն ակտիվորեն ներգրավում է տեղական բնակչությանը սեփական համայնքի զարգացման ծրագրերի պլանավորման, համաֆինանսավորման և իրականացման գործում՝ խթանելով սեփականատիրության զգացումը և կայունությունը:

Արագացված գյուղական գնահատման (ԱԳԳ /RRA-ի) նպատակները.

1. Իրականացնել թիրախ բնակավայրերի սոցիալ-տնտեսական իրավիճակի համակողմանի վերլուծություն:
2. Գնահատել բնակչության կախվածությունը բնական ռեսուրսներից և պահպանվող տարածքների հետ փոխհարաբերությունները:
3. Նախանշել համայնքահեն միկրո-ծրագրերի հնարավոր ուղղությունները, որոնք կհամատեղեն ապրուստի միջոցների բարելավումը և կենսաբազմազանության պահպանությունը:
4. Ապահովել թափանցիկություն և թիրախ բնակավայրերի պատրաստվածություն առաջիկա դրամաշնորհային մրցույթին:

3. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գնահատումն իրականացվել է մասնակցային և ներառական սկզբունքների հիման վրա՝ համադրելով քանակական և որակական տվյալների հավաքագրման գործիքները.

Ֆոկուս խմբային քննարկումներ (ՖԽՔ). Իրականացվել են բոլոր 10 թիրախային բնակավայրերում: Մասնակիցների ներգրավումը կատարվել է՝ առաջնորդվելով ներառականության սկզբունքով (ֆերմերներ, տեղական ձեռնարկատերեր, կանայք, երիտասարդներ, խոցելի խմբերի ներկայացուցիչներ և բնակավայրերի վարչական ղեկավարներ)՝ ըստ հնարավորության:

Կիսակառուցվածքային հարցազրույցներ. Տեղեկատվության բացը լրացնելու համար ըստ անհրաժեշտության հարցազրույցներ են անցկացվել տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների կամ համայնքի ակտիվ անդամների հետ:

Գենդերային և տարիքային զգայունություն. Քննարկումների ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել կանանց և երիտասարդների առանձին խմբերի ձայնի լսելիությանը: Քննարկումներին մասնակցել են թիրախ բնակավայրերի 67 ներկայացուցիչներ: Կանանց մասնակցության միջին ցուցանիշը կազմել է մոտ 49,25% կամ 33 անձ, երիտասարդները՝ մոտ 61,19% կամ 41 անձ:

Պաշտոնական աղբյուրների և փաստաթղթերի ուսումնասիրություն. Ուսումնասիրվել են Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզպետարանների պաշտոնական կայքերը, Դիլիջան, Սևան և Ֆիոլետովո համայնքների պաշտոնական էջերի տվյալները, զարգացման հնգամյա ծրագրերը և այլ պաշտոնական վիճակագրական տվյալներ:

Սահմանափակումներ. Հետազոտության հիմնական սահմանափակումը պաշտոնական վիճակագրական որոշ տվյալների (հատկապես փաստացի բնակվողների թվի և արտագնա աշխատանքի մեկնողների ճշգրիտ թվաքանակի) բացակայությունն էր կամ անհամապատասխանությունը, հատկապես բազմաբնակավայր համայնքների կազմի մեջ մտնող առանձին բնակավայրերի պարագայում, ինչը հնարավորինս լրացվել է ֆոկուս խմբային քննարկումների կամ անհատական հարցազրույցների ընթացքում ստացված էմպիրիկ տվյալներով:

4. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊՐՈՖԻԼՆԵՐ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքների դասակարգման մատրիցա. 10 բնակավայրերը բաժանված են խմբերի (կլաստերների)՝ ըստ իրենց հիմնական ռեսուրսի և էկոլոգիական կախվածության:

Կլաստերի անվանումը	Ներառված բնակավայրեր	Ռեսուրսային կախվածություն	ՖՄՄ ծրագրային կիզակետ (Focus)
1. Բարձրլեռնային էներգետիկ-խոցելի գոտի	Սեմյոնովկա, Հովք	Արոտավայրեր, բարձր կախվածություն անտառի վառելափայտից (չգազիֆիկացված հատվածներ), ցածր եկամուտ, աշխատատեղերի բացակայություն, որն էլ հանգեցնում է ցածր վճարունակության:	Կաթնամթերքի վերամշակման արտադրամասի հիմնում կամ հանձնման կետի հիմնում, ձմեռային սպորտաձևերի զարգացում, քայլարշավային ու հեծանվային արահետների և տարբեր մրցարշավների կազմակերպում՝ զբոսաշրջության զարգացում, էներգախնայողություն, տների ջերմամեկուսացում, լեռնային մեղվաբուծության զարգացում, հանդիսությունների սրահի վերանորոգում և կահավորում, մաքուր խմելու ջրի և փողոցային լուսավորության հարցի լուծում (Հովք):
2. Տուրիստական բարձր ճնշման գոտի	Դիլիջան, Գոշ, Հաղարծին	Ազգային պարկի անտառային արահետներ, լճային էկոհամակարգեր:	Կայուն տուրիզմ, թափոնների կառավարում, էկո-արահետներ, քաղաքային միասնական կերպարի/ձեռագրի բացակայություն (Դիլիջան), արհեստների զարգացում, կանոնավոր և մասնագիտական հավաքչության իրականացմանն ուղղված իրազեկման արշավներ, բրենդավորում, էներգախնայող լուծումների առաջարկում:
3. Ագրո-մշակութային յուրօրինակ գոտի	Ֆիոլետովո	Միատարր հողագործություն (օրինակ՝ կաղամբ), մշակութային փակ էկոհամակարգ:	Արժեշղթայի արդիականացում, էթնո-ագրոտուրիզմ:
4. Ծայրամասային-անտառամերձ	Թեղուտ, Աղավնավանք, Խաչարձան	Անտառի վայրի բարիքներ,	Կանանց կոոպերատիվների (չրագործություն, հավաքչություն,

կայունացման գոտի		դեղաբույսեր, փոքր ոռոգելի հողեր:	գյուղատնտեսական) ստեղծում և գործարկում, սոցիալական ձեռներեցություն, թափոնների արդյունավետ կառավարում, էներգախնայող լուսավորության համակարգերի ներդրում, փորձարարական տուրիզմի զարգացում, մեղվապահության խթանում, բնապահպանական իրազեկում՝ ցուցանակներև այլն:
5. Ափամերձ էկո-գոտի	Ծովագյուղ	Սևանա լճի ավազան, արոտներ, միջպետական առևտուր:	Էկոհամակարգի պահպանություն, արևային տեխնոլոգիաներ սպասարկման ոլորտում, էներգախնայող լուսավորության համակարգի անցկացում, համայնքային ենթակառուցվածքների բարելավում:

4.1. Ֆիոլետովո համայնք (վարչական կենտրոնը՝ գ. Ֆիոլետովո) (Լոռու մարզ)

Մակերես՝ 25.03 կմ²
Բնակչություն՝ 1512 (Լոռու մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայք-էջ), 1219 (համայնքի պաշտոնական կայք-էջ), 1220 բնակիչ, 320 տնային տնտեսություն (ֆոկուս խմբային քննարկման արդյունքում ստացված տվյալներ)
Հեռավորությունը մարզկենտրոնից (Վանաձոր)՝ 23,5 կմ
Գյուղը հիմնադրվել է 19-րդ դարի կեսերին, երբ Ռուսաստանից արտաքսված մոլոկանները հաստատվեցին այստեղ: Ֆիոլետովոն առանձնանում է իր ճարտարապետությամբ՝ փայտե տներով և առանձնահատուկ գյուղական մթնոլորտով: Տեղացիները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և գյուղատնտեսությամբ: Մինչև այսօր համայնքը պահպանել է իր ինքնատիպ մշակույթը, լեզվական առանձնահատկություններն ու կրոնական հայացքները: Ֆիոլետովոն հետաքրքրում է զբոսաշրջիկներին, որոնք այցելում են գյուղ՝ ծանոթանալու մոլոկանների կենցաղին ու ավանդույթներին:
Ֆիոլետովո համայնքին բնորոշ է ցուրտ ձմեռներով և մեղմ ամառներով կլիման: Ձմռանը օդի միջին ջերմաստիճանը հունվարին հասնում է -8,5°C-ի,ամռան ամիսներին, հատկապես հուլիսին, օդի միջին ջերմաստիճանը բարձրանում է մինչև 26,0°C, ստեղծելով բավականին տաք պայմաններ: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է միջինը 325 մմ: Ֆիոլետովոյի աշխարհագրական դիրքը և բնության գեղեցկությունը նպաստում են էկոտուրիզմի զարգացմանը, ինչը վերջին տարիներին ավելի մեծ ուշադրություն է գրավում:[1]
Մոլոկանների շարժումը Ռուսաստանում ծագել է 18-րդ դարի երկրորդ կեսին:
1830-ական թվականներին, Ռուսաստանի դեպի Անդրկովկաս ակտիվ էքսպանսիայի ժամանակ, մոլոկանների շրջանում լուրեր էին տարածվում «Արարատյան թագավորության» մասին, որտեղից Հիսուսի իսկական հետևորդները, տապանի ուղևորների նման, կսկսեն մարդկության նոր, ճշմարիտ պատմությունը: Ռուսական

[1] Ֆիոլետովո համայնքի պաշտոնական կայք-էջ՝ https://fioletovo.am/Pages/CustomPage/?CustomPageID=722b890c-cc0b-4c5d-bdf2-30fbebab4291

իշխանությունները այս կամ այն կերպ օժանդակում էին մոլոկանների տարածմանը Անդրկովկասում, հատկապես Հայաստանում: Նրանք առավել խիտ բնակեցվեցին Սևանա լճի շրջակայքում և դրանից դեպի Հյուսիս Արևմուտք:
Գյուղը հիմնադրման պահին անվանվել է Նիկիտինսկոյե: 1990թ. վերջին, երբ ռուսների թիվը հանրապետությունում խիստ կրճատվեց, միաէթնիկ Ֆիոլետովոյից գրեթե ոչ ոք չհեռացավ:
Նիկիտինսկոյեն վերանվանվել է Ֆիոլետովո 1936թ.-ին ի պատիվ Բաքվի 26 կոմիսարներից մեկի՝ Ի.Տ. Ֆիոլետովի: Գյուղը ներկայումս ունի 390 տնտեսություն:
Գյուղը տեղակայված է ծովի մակերևույթից 1715մ բարձրության վրա: Համայնքի վարչական տարածքը 2500 հա է, որից 297 հա վարելահող, խոտհարք 606 հա, արոտավայր 730 հա: Գյուղատնտեսական 1653 հա հողատեսքերից 705 հա սեփականաշնորհված են: Գյուղում ավանդաբար աճեցվում է հիմնականում բանջարեղեն՝ հատկապես կաղամբ:
Համայնքում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1126 է, որից 564-ը կովեր: Մանր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 680, որից մայրեր՝ 550 գլուխ: Համայնքում առկա է շուրջ 300 գյուղատնտեսական տեխնիկա: Հասցեն՝ գ. Ֆիոլետովո, 2042; հեռ՝ (+374 322) 6-89-41; էլ.հասցեն՝ fioletovo.lori@mta.gov.am; Վեբ կայք՝ www.fioletovo.am[2]

Ֆոկուս խմբային քննարկումների և անհատական հարցազրույցների արդյունքում ստացված տվյալներ՝

- **Բնակչության ընդհանուր թիվը, տնային տնտեսությունների քանակը և տարիքային կազմը.** 1220 բնակիչ, 320 տնային տնտեսություն:
- **Բնակչության նվազման կամ աճի միտում (միգրացիա).** Վերջին տարիներին նկատվում է բնակչության աճի դինամիկայի նվազում, որը պայմանավորված է հիմնականում աշխատանքի բացակայությամբ, գյուղատնտեսական մթերքների վատ իրացմամբ: Բնակիչները տեղափոխվում են հիմնականում Երևան և հարակից տարածքներ, ավելի քիչ՝ Ռուսաստանի դաշնություն:
- **Եկամտի հիմնական աղբյուրները.** Գյուղատնտեսություն, հողագործություն, անասնապահություն, ներգնա աշխատանք (Հայաստանի հանրապետության տարածքում):
- **Միջին ամսական եկամուտը մեկ շնչի հաշվով.** 60.000-70.000 դրամ
- **Տեղական վերամշակող ձեռնարկությունների կամ փոքր բիզնեսների առկայություն.** Թթուների, աղցանների պատրաստում և մատակարարում, գյուղում կան 3 խանութ, Երևանում գործող, բայց գյուղում գրանցված տեխնիկայի վարձակալության ձեռնարկություն:
- **Ճանապարհների, դպրոցների և մանկապարտեզների վիճակը.** Գյուղամիջյան ճանապարհների վիճակն անմխիթար է, բոլորը հողային են, առկա են մեկ դպրոց, նախակրթարան/դպրոցին կից, մանկապարտեզը նոր է կառուցվում:
- **Համայնքի ապահովվածություն խմելու և ոռոգման ջրով, էլեկտրաէներգիայով և գազով**. Խմելու ջրով համայնքն ապահովված է, թեև կենտրոնացված ջրամատակարարման համակարգ առկա չէ, կոյուղին (կենտրոնացված) կառուցվում է սուբվենցիոն ծրագրով, ոռոգման ջուր չկա, գազաֆիկացում, էլեկտրաէներգիա, լուսավորություն առկա են:
- **Հեռավորությունը մոտակա բժշկական կենտրոնից**. Համայնքի բնակիչները օգտվում են հիմնականում Մարգահովիտի ամբուլատորիայից, համայնքում կա փոքր բուժկետ, ունեն բուժքույր:
- **Այս պահին համայնքում իրականացվող պետական և միջազգային ծրագրերը**. Մասնակցային բյուջետավորմամբ՝ պետական և համայնքային բյուջեի միջոցներով այս պահին ընթացքի մեջ են խաղահրապարակի կառուցման և կահավորման աշխատանքները, նիստերի դահլիճի վերանորոգումը և կահավորումը, Ռուսաստանից բարերարների միջոցով կառուցվում է մանկապարտեզը, այլ ծրագրեր չեն իրականացվում:
- **Նախկինում իրականացված ծրագրերի ազդեցությունը համայնքի վրա.** Սեփական միջոցներով կառուցվել է սպանդանոց, ձեռք է բերվել գյուղտեխնիկա ԳԻZ-ով, վերականգնվել են արոտավայրերի

[2] ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայք՝ http://lori.mtad.am/about-communities/575/

ճանապարհները, ձեռք է բերվել աղբատար մեքենա Ճապոնիայի դեսպանատան հետ համագործակցությամբ:

- **Հողի օգտագործումը (արոտավայրեր, վարելահողեր).** Համայնքային հողերի մեծ մասը որպես արոտավայրեր են օգտագործվում, վարելահողերը շատ քիչ են, դրանք էլ հիմնականում օգտագործվում են որպես խոտհարքեր:
- **Համայնքի հեռավորությունը պահպանվող տարածքից.** Համայնքի մի մասը հենց պահպանվող տարածքի մաս է կազմում:
- **Տարածքի կենսաբազմազանությունը կամ բնական հարստությունը.** Վայրի հապալաս, արջ, եղնիկ, արծիվ, լոր, աղվես, անտառային կատու և այլն:
- **Համայնքի առավել խոցելի խմբերը (բազմազավակ ընտանիքներ, փախստականներ, հաշմանդամություն ունեցող անձինք).** Քիչ մարդիկ են ձևակերպում հաշմանդամություն, կենսաթոշակ չեն ստանում՝ ազգային առանձնահատկություն է, բազմազավակ ընտանիքներ շատ կան:
- **Հարաբերությունները համայնքի տարբեր սոցիալական խմբերի միջև**. Համայնքի բնակիչների միջև հարաբերությունները նորմալ են, բարի-դրացիական:
- **Համայնքում գործող ՀԿ-ներ, կոոպերատիվներ կամ երիտասարդական խմբեր.** Չկան:
- **Համայնքի մասնակցություն որոշումների կայացմանը.** Ակտիվ մասնակցում են բնակիչները, կարող է չգան հանդիպումների, բայց համայնքի ներսում քննարկեն և տեղեկացնեն[3]:

Ամփոփելով համայնքի վերաբերյալ հավաքագրված հիմնական տվյալները՝

Ժողովրդագրություն և սոցիալական դինամիկա. Համայնքը հիմնականում բնակեցված է ռուս-մոլոկաններով: Աչքի է ընկնում բարձր համախմբվածությամբ, ավանդապաշտությամբ և յուրօրինակ մշակութային միջավայրով: Սոցիալական կապերը խիստ ներհամայնքային են:

Տնտեսական գործունեություն. Գլխավոր ուղղությունը կաղամբի և արմատապտուղների (գազար) մշակությունն է, ինչպես նաև կաթնատու անասնապահությունը: Լայնորեն տարածված է կաղամբի թթվեցման և վաճառքի տնայնագործական արտադրությունը:

Ենթակառուցվածքներ. Ոռոգման ջրի համակարգի բարելավման և արտադրանքի պահպանման (սառնարանային տնտեսություններ) և իրացման խիստ անհրաժեշտություն կա: Ներհամայնքային ճանապարհները նորոգման կարիք ունեն:

Բնական ռեսուրսներ և ռիսկեր. Կլիմայական փոփոխությունները (երաշտ, կարկուտ) մեծ ռիսկ են հանդիսանում միատարր գյուղատնտեսության համար: Հողերի էրոզիան և անտառային գոտուն մոտ լինելը պահանջում են կայուն հողօգտագործում:

ՖՄՄ ներուժ. Էթնո-տուրիզմի (մոլոկանների կենցաղի և մշակույթի ներկայացում, հյուրատներ), կաղամբի վերամշակման արդիականացում, գյուղմթերքի իրացման նորարար և աշխատող տեխնոլոգիաների մշակում, արևային էներգիայի կիրառում տնտեսություններում:

4.2. Ծովագյուղ բնակավայր (Սևան բազմաբնակավայր համայնք, Գեղարքունիքի մարզ)

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ համայնքը հիմնադրվել է 1830թ.ին: Բնակչությունը գաղթել է Արևմտյան Հայաստանի Արծափ գյուղից: Նախկին անունները՝ Ճիպոտիկ, Չիբուխլու: Ծովագյուղը մինչև 1935 թվականը

[3] Ֆոկուս խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ

կոչվել է Չիբուխլու: Գյուղը մշտական կապերի մեջ է եղել Սևանա վանքի հետ: Ծովագյուղում և շրջակայքում պահպանվել են Քառատափ գյուղատեղին, եկեղեցի, ամրոցի ավերակներ (Ք.ա. առաջին հազարամյակ), գերեզմանոցներ, խաչքարեր: Գյուղն իր ափամերձ տարածքներով զբոսաշրջությամբ, հանգստի, առողջարանային հիանալի բնակավայր է:

Ծովագյուղ *բնակավայրն իր աշխարհագրական դիրքով Հայաստանի ամենալեռնոտ շրջաններից է. գտնվում է Արեգունի, Փամփակի և Գեղամա լեռնաշղթաների հանգուցակետում: Գյուղի տարածքով է անցնում Զկնգետը: Գտնվում է ծովի մակերևույթից 2000մ բարձրության վրա, հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 75.6 կմ է, մարզկենտրոնից՝ 48.1 կմ հեռավորության վրա: Բնակավայրի վարչական տարածքը զբաղեցնում է 7314,92 հա[4]:*

Ֆոկուս խմբային քննարկումների և անհատական հարցազրույցների արդյունքում ստացված տվյալներ՝

- **Բնակչության ընդհանուր թիվը, տնային տնտեսությունների քանակը և տարիքային կազմը.** 4427 գրանցված, որից մշտական բնակչություն՝ 4346, բնակիչ, 1010 տնային տնտեսություն:
- **Բնակչության նվազման կամ աճի միտում (միգրացիա).** Վերջին տարիներին նկատվում է բնակչության աճի միտում:
- **Եկամտի հիմնական աղբյուրները.** Գյուղի բնակիչների եկամուտը հիմնականում գոյանում է հանգստի գոտիների, ընդհանուր առմամբ՝ սպասարկման ոլորտում զբաղվածությունից, առևտրային գործունեությունից, պետական ոլորտում աշխատանքից, տարբեր արտադրամասերում՝ հացի, կարի, զբաղվածությունից, գյուղատնտեսական գործունեությունից:
- **Միջին ամսական եկամուտը մեկ շնչի հաշվով.** Դժվարանում են պատասխանել:
- **Տեղական վերամշակող ձեռնարկությունների կամ փոքր բիզնեսների առկայություն.** Գյուղում գործում են առևտրային ձեռնարկություններ, հրուշակեղենի, կարի, հացի արտադրամասեր և այլն:
- **Ճանապարհների, դպրոցների և մանկապարտեզների վիճակը.** Ճանապարհների վիճակը գերազանց է, գյուղն ունի մեկ միջնակարգ դպրոց, նախակրթարան՝ դպրոցին կից, մանկապարտեզն այժմ վերանորոգվում է պետական միջոցներով, դպրոցը՝ նույնպես:
- **Համայնքի ապահովվածություն խմելու և ոռոգման ջրով, էլեկտրաէներգիայով և գազով**. Գյուղում կենտրոնացված ջրամատակարարում չկա, կարելի է ասել, որ մասամբ ապահովված է խմելու ջրով, ոռոգման ջուր չկա, էլեկտրաէներգիա, գազաֆիկացում առկա են, փողոցների լուսավորությունը մասամբ է ապահովված:
- **Հեռավորությունը մոտակա բժշկական կենտրոնից**. Համայնքի բնակիչները օգտվում են հիմնականում գյուղի ամբուլատորիայից, ըստ անհրաժեշտության՝ նաև Սևանի բժշկական կենտրոնից:
- **Այս պահին համայնքում իրականացվող պետական և միջազգային ծրագրերը**. Համայնքի և պետության համաֆինանսավորմամբ կառուցվում/վերանորոգվում են գյուղի մշակույթի տունը, մանկապարտեզը և դպրոցը: «Տարածքային զարգացման և հետազոտությունների զարգացման կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ հիմնվել է Երիտասարդական կենտրոնը:
- **Նախկինում իրականացված ծրագրերի ազդեցությունը համայնքի վրա.** Պետական միջոցներով բազմաթիվ ծրագրեր են արվել:
- **Հողի օգտագործումը (արոտավայրեր, վարելահողեր).** Մեծ մասամբ օգտագործվում են արոտավայրերը, իսկ վարելահողերը հիմնականում չեն օգտագործվում նպատակային նշանակությամբ, այլ օգտագործվում են որպես խոտհարքեր: Նախկինում գյուղի տարածքում մշակվել է հնդկացորեն, աշխատել է գործարան, սակայն մի քանի տարի է՝ այլևս չի գործում:

[4] ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայք՝ http://gegharkunik.mtad.am/about-communities/265/

- **Համայնքի հեռավորությունը պահպանվող տարածքից.** Ուղիղ գծով՝ 2 կմ:
- **Տարածքի կենսաբազմազանությունը կամ բնական հարստությունը.** Որորներ, աղվես, կզաքիս, հատուկ մողեսներ՝ մոնոգամներ, բոխի, ծակ բալդրղան, փիփերթ և այլն:
- **Համայնքի առավել խոցելի խմբերը (բազմազավակ ընտանիքներ, փախստականներ, հաշմանդամություն ունեցող անձինք).** Գյուղում բնակվում են Լեռնային Ղարաբաղից տեղահանված երկու ընտանիքներ, կան պատերազմի հետևանքով հաշմանդամություն ստացած անձանցով ընտանիքներ, բազմազավակ ընտանիքներ:
- **Հարաբերությունները համայնքի տարբեր սոցիալական խմբերի միջև**. Համայնքի բնակիչների միջև հարաբերությունները լավ են ընդհանուր առմամբ:
- **Համայնքում գործող ՀԿ-ներ, կոոպերատիվներ կամ երիտասարդական խմբեր.** Երիտասարդական կենտրոնի երիտասարդներ:
- **Համայնքի մասնակցություն որոշումների կայացմանը.** Բնակիչները մասնակցում են հիմնականում հանրային քննարկումներին[5]:

Ամփոփելով համայնքի վերաբերյալ հավաքագրված հիմնական տվյալները՝

Ժողովրդագրություն և սոցիալական դինամիկա. Խոշոր, ակտիվ բնակչությամբ ափամերձ բնակավայր:

Տնտեսական գործունեություն. Անասնապահություն: Սևանա լճի՝ մոտ գտնվելու պատճառով զարգացած է նաև սպասարկման ոլորտը (մայրուղու երկայնքով առևտուր, հանգստի գոտիներ), սակայն ձկնորսության սահմանափակումները փոխել են տնտեսական դինամիկան:

Ենթակառուցվածքներ. Խմելու ջրի կենտրոնացված ջրամատակարարման համակարգի կառուցման, ոռոգման համակարգի անցկացման, կոյուղատարների և մաքրման կայանների կարիք: Էներգախնայող փողոցային լուսավորության համակարգի ներդրման կարիք կա: Փողոցների համարակալում, անվանումներով ցուցանակներ են անհրաժեշտ:

Բնական ռեսուրսներ և ռիսկեր. Սևանա լճի էկոհամակարգի պահպանության խիստ պահանջներ, ձկնային պաշարների նվազում, արոտավայրերի գերարածեցում և դեգրադացիա:

ՖՄՄ ներուժ. Ափամերձ կայուն տուրիզմի զարգացում, էներգաարդյունավետ տեխնոլոգիաների (արևային ջրատաքացուցիչներ) ներդրում և էներգախնայող լուսավորության անցկացում, գյուղի փողոցների անվանումներով ցուցանակների տեղադրում և համարակալում՝ այցելուների կողմնորոշման համար առավել դյուրին դարձնելու նպատակով:

4.3. Սեմյոնովկա բնակավայր (Սևան բազմաբնակավայր համայնք, Գեղարքունիքի մարզ)

Սեմյոնովկա գյուղը հիմնադրվել է 1845 թվականին Ռուսաստանից աքսորված 7 աղանդավոր մոլոկանների կողմից: Գյուղի փոխարեն անտառ է եղել: Մոլոկանները հատել են ծառերը ու փայտե տներ կառուցել: Սկզբում մի քանի ընտանիք է ապրել: Գյուղն էլ անուն չի ունեցել: Հետագայում ձմռան մի օր, երբ ճանապարհը փակվել է, ռուս ճանապարհորդ Սեմյոնովը 2 օր մնացել է գյուղում, ում անունով էլ գյուղը կոչել են Սեմյոնովկա: Այն

[5] Ֆոկուս խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ

բնակեցված է եղել մոլոկաններով, ռուսներով և քրդերով: Առաջին հայ ընտանիքը գյուղում բնակություն է հաստատել 1938-39 թթ:

Սեմյոնովկա *բնակավայրը գտնվում է Արեգունի և Գեղամա լեռների արանքում: Հարավային մասով անցում է Զկնգետը, որը թափվում է Սևանա լիճը: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2100 մ բարձրության վրա, հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 80 կմ է, մարզկենտրոնից՝ 55 կմ հեռավորության վրա: Բնակավայրի վարչական տարածքը զբաղեցնում է 3240 հա*[6]*:*

Ֆոկուս խմբային քննարկումների և անհատական հարցազրույցների արդյունքում ստացված տվյալներ՝

- **Բնակչության ընդհանուր թիվը, տնային տնտեսությունների քանակը և տարիքային կազմը.** 302 բնակիչ (61՝ 0-17 տարեկան, 199՝ 18-64 տարեկան և 42՝ 65+ տարեկան), 61 տնային տնտեսություն:
- **Բնակչության նվազման կամ աճի միտում (միգրացիա).** Վերջին տարիներին նկատվում է բնակչության թվաքանակի ակնհայտ նվազում, մեծ մասն արտագնա աշխատանքի են մեկնել ու չեն վերադարձել, գրանցված են գյուղում, բայց հիմնականում սոցիալ-տնտեսական պայմանների պատճառով լքել են գյուղը:
- **Եկամտի հիմնական աղբյուրները.** Հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, մեկնում են արտագնա աշխատանքի, հողագործությամբ չեն զբաղվում, քանի որ բնակլիմայական պայմանները բարենպաստ չեն, գյուղում եկամտի կայուն աղբյուր ունեն միայն դպրոցի, գյուղի վարչական ղեկավարի աշխատակազմի, ինչպես նաև բուժկետի և օդերևութաբանական կայանի աշխատակիցները (աշխատավարձ):
- **Միջին ամսական եկամուտը մեկ շնչի հաշվով.** Շատ ցածր է, կաթի հանձնումից են հիմնականում գումար վաստակում
- **Տեղական վերամշակող ձեռնարկությունների կամ փոքր բիզնեսների առկայություն.** Գյուղում կաթի վերամշակման կետ է եղել, բայց ձեռնտու չի եղել, փակվել է:
- **Ճանապարհների, դպրոցների և մանկապարտեզների վիճակը.** Ճանապարհները լավ վիճակում են, այս պահին պետական ծրագրեր կան, որ նաև երկրորդային փողոցները ասֆալտապատվեն, կա մեկ դպրոց կա հիմնական, մանկապարտեզ չկա (չնայած երեխա էլ չկա, երեք տարի նույնիսկ առաջին դասարան չի լինելու):
- **Համայնքի ապահովվածություն խմելու և ոռոգման ջրով, էլեկտրաէներգիայով և գազով**. Խմելու ջրով գյուղն ապահովված է, կա կենտրոնացված ջրամատակարարում, ոռոգման ջուր չկա (պետք էլ չէ), էլեկտրաէներգիա ու գազաֆիկացում առկա են:
- **Հեռավորությունը մոտակա բժշկական կենտրոնից**. Գյուղում կա բուժկետ, սակայն անհրաժեշտության դեպքում օգտվում են Ծովագյուղի ամբուլատորիայից (7 կմ) կամ Սևանի բժշկական կենտրոնից (25 կմ):
- **Այս պահին համայնքում իրականացվող պետական և միջազգային ծրագրերը**. Պետական սուբսիդավորմամբ իրականացվում են ասֆալտապատման աշխատանքներ, այս պահին քննարկվում է արևային վահանակների տեղադրման հարց, բայց մասնավոր ներդրմամբ:
- **Նախկինում իրականացված ծրագրերի ազդեցությունը համայնքի վրա.** Կանաչ արահետ ՀԿ-ի միջոցով խաղահրապարակ է կառուցվել, սակայն կիսատ է մնացել, ծրագրեր չեն արվում կարելի է ասել, շատ տարիներ առաջ Հայկական Կարիտասն է եղել:
- **Հողի օգտագործումը (արոտավայրեր, վարելահողեր).** Համայնքային հողերի մեծ մասը որպես արոտավայրեր են օգտագործվում, վարելահողերն էլ հիմնականում օգտագործվում են որպես խոտհարքեր, քանի որ կլիմայական պայմանները թույլ չեն տալիս զբաղվել հողագործությամբ:
- **Համայնքի հեռավորությունը պահպանվող տարածքից.** Հեռավորությունը կազմում է մոտ 2-3 կմ, ազգային պարկի տարածքի շուրջ 67,7 հա-ն գտնվում է գյուղի վարչական տարածքում:

[6] ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայք՝ http://gegharkunik.mtad.am/about-communities/265/

- **Տարածքի կենսաբազմազանությունը կամ բնական հարստությունը.** Սիզախոտ, կծմախոտ, կրծողներ, գայլ, աղվես, եղնիկ, արջ, շնագայլ, նապաստակ և այլն:
- **Համայնքի առավել խոցելի խմբերը (բազմազավակ ընտանիքներ, փախստականներ, հաշմանդամություն ունեցող անձինք).** Գյուղում կա հաշմանդամություն ունեցող անձանցով մեկ ընտանիք (3 հաշմանդամություն ունեցող անձ), Լեռնային Ղարաբաղից տեղահանված երկու ընտանիք, միայնակ ծերեր:
- **Հարաբերությունները համայնքի տարբեր սոցիալական խմբերի միջև**. Շատ հանգիստ գյուղ է, միասնական են, օգնում են միմյանց, նաև՝ միայնակ ծերերին:
- **Համայնքում գործող ՀԿ-ներ, կոոպերատիվներ կամ երիտասարդական խմբեր.** Չկան, նախկինում եղել է գյուղատնտեսական կոոպերատիվ, սակայն փակվել է:
- **Համայնքի մասնակցություն որոշումների կայացմանը.** Հանրային լսումների ժամանակ ներկա են լինում բնակիչները, սակայն համայնքների խոշորացումից հետո ավագանի չունեն և կապը վարչական կենտրոնի հետ շատ թույլ է[7]:

Ամփոփելով համայնքի վերաբերյալ հավաքագրված հիմնական տվյալները՝

Ժողովրդագրություն և սոցիալական դինամիկա. Ըստ պաշտոնական տվյալների՝ բնակավայրում առկա է 61 տնտեսություն, ընդամենը բնակչությունը՝ 302 մարդ: Տարիքային կազմը՝ 0-14 տարեկան՝ 49 հոգի, 18-30 տարեկան (երիտասարդներ)՝ 48 հոգի, 31-64 տարեկան՝ 151 հոգի, 65-ից բարձր՝ 42 հոգի: Բնակչությունը նվազող է, առկա է ծերացման միտում և երիտասարդների արտահոսք:

Տնտեսական գործունեություն. Բարձրլեռնային գոտի է, հիմնական ապրուստի միջոցը բարձրլեռնային անասնապահությունն է (կաթնամթերքի արտադրություն) և մեղվաբուծությունը:

Ենթակառուցվածքներ. Թեև բնակավայրը գազիֆիկացված է, սակայն աշխատատեղերի բացակայության պատճառով մարդիկ վճարողունակ չեն, ինչը մեծացնում է կախվածությունը վառելափայտից կամ էլեկտրաէներգիայից: Խիստ ձմեռների պատճառով ջեռուցման ծախսերը հսկայական են: Ճանապարհները ձմռանը հաճախ դառնում են դժվար անցանելի:

Բնական ռեսուրսներ և ռիսկեր. Գտնվում է «Դիլիջան ազգային պարկի» և Սևանի ավազանի հատման կետում (լեռնանցք): Բնապահպանական ռիսկերից են անտառհատումները (ջեռուցման նպատակով) և արոտավայրերի էրոզիան:

ՖՄՄ ներուժ. Բացարձակ առաջնահերթություն է էներգաարդյունավետության բարձրացումը (տնտեսությունների ջերմամեկուսացում, արևային պանելներ և ջրատաքացուցիչներ): Նաև՝ բարձրլեռնային էկոտուրիզմ (ագրոտուրիզմ), մեղվաբուծության զարգացումը, ձմեռային տուրիզմի զարգացումը, գյուղի հանդիսությունների սրահի վերանորոգումը և կահավորումը, ինչպես նաև գյուղում կաթի վերամշակման արտադրամասի ստեղծմանը, գործարկմանը և արտադրանքի իրացմանն ուղղված գաղափարները:

[7] Ոչկրս խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ

4.4. Դիլիջան (քաղաքային բնակավայր, Տավուշի մարզ, Դիլիջան բազմաբնակավայր համայնք)

Դիլիջան առողջարանային քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելյան մասում՝ Աղստև գետի հովտում, ծովի մակերևույթից 1100-1510 մետր բարձրության վրա, շրջապատված Փոքր Կովկասի լեռնազանգվածներով: Հյուսիս-արևելյան մասերում նրան հարում են Բազումի, արևմտյան և հարավ-արևմտյան կողմերից՝ Փամբակի, արևելքից՝ Մուրղուզի և հարավ-արևելքից՝ Արեգունի լեռները: Կիրճի լեռնային զանգվածները ծածկված են հարուստ անտառներով, որոնք վերջանալով լեռնային կատարներին, փոխարինվում են ալպյան մարգագետիններով: Քաղաքը բարեկարգ ավտոմայրուղով կապված է մայրաքաղաք Երևանի (96 կմ), Վանաձորի և Իջևանի հետ (35-40 կմ): 1986 թվականից երկաթուղով կապված է Հանրապետության երկաթուղային ցանցին (Դիլիջան-Երևան հատվածը 144 կմ): Դիլիջանին բնորոշ է մեղմ, լեռնա-անտառային չափավոր զով ամառը, արևաշատ տաք ձմեռը, ամբողջ տարվա ընթացքում չոր և տաք եղանակը: Հուլիսի միջին ջերմաստիճանը +18 է, հունվարինը՝ 0 ից -2: Օդի չորությունը առանձնապես արտահայտվում է ձմռան և գարնան ամիսներին: Օդի հարաբերական խոնավությունը 70% է, տեղումների քանակը՝ 637 մմ, արևափայլի տևողությունը՝ 2091 ժամ:

Դիլիջանի տարածքում 19-րդ դարի 70-ական թվականներին կատարված հնագիտական հետազոտությունները ցույց են տվել, որ այստեղ մարդը սկսել է ապրել ուշ բրոնզե և վաղ երկաթե դարերից (մթա 2-րդ հազարամյակի վերջ- 1-ին հազարամյակի սկիզբ):[8]

Դամբարանադաշտեր են հայտնաբերվել Ռեդկին լագերի, Խրտոնանոցի և Պապանինոյի տեղամասերում: Հայտնաբերված նյութերի մեծ մասը Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Թբիլիսիի, Բաքվի և Երևանի թանգարաններում են, մի մասն էլ Դիլիջանի երկրագիտական թանգարանում: Դիլիջանի հիմնադրման բուն տարեթիվը դեռևս հայտնի չէ: Ներկայիս Դիլիջանի տարածքը մտել է պատմական Մեծ Հայքի Այրարատ նահանգի Վարաժնունիք գավառի մեջ: 4-րդ դարում՝ երբ Հայաստանը բաժանվել է Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, այդ հողերը (պատմական Հովք) մտել են Գուգարքի մարզի Ձորափոր գավառի մեջ և հանդիսացել են հայոց թագավորների հանգստավայր և արքայական որսատեղի: Կապված պատմական իրադարձությունների հետ՝ քաղաքի տարածքի անվանումները և սահմանները մի քանի անգամ փոխվել են: 8-րդ դարում այդ տարածքները մտել են Կայենի գավառի կազմի մեջ, իսկ ավելի ուշ Կուստ-Արցախյան նահանգի մեջ: 15-րդ դարից մինչև Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միավորումը՝ դրանք մտնում էին Գանձակի խանության մեջ: Այնուհետև դրանք մտել են Ելիզավետապոլի նահանգի մեջ:

Քաղաքի անվան ստուգաբանման վերաբերյալ կան մի շարք բանահյուսական վարկածներ: Առկա է նաև պատմական վարկած, որը անվան բացատրությունը կապում է համանուն իշխանի անվան հետ: Առաջին անգամ գրավոր աղբյուրներում Դիլիջան անունը հիշատակվել է Ֆրանսիացի Ճանապարհորդ Ժան Շարդենի ուղեգրություններում՝ 1666 թ.: Ըստ 19-րդ դարի սկզբի պատմական աղբյուրների Դիլիջանը Ղազախի գավառի 27 գյուղերից մեկն էր և ուներ 60 տուն բնակչություն: Նաև հայտնի է, որ 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին այստեղ վերաբնակվել են Իջևանի շրջանի Սևքար, Սարիգյուղ, և Աչաջուր գյուղերից, ինչպես նաև Նոյեմբերյանի շրջանի Կոթի գյուղից, կազմելով բնակավայրի հիմնական բնակչությունը:

Տարածքի միջին բացարձակ բարձրությունը 1256 մետր է: Ռելիեֆը բարդ է: Աղստև գետի ողողահունը և դարավանդները հարթ են, իսկ լանջերը թեք են՝ կտրված հեղեղատներով: Տարածքի կլիման չափավոր տաք և խոնավ է: Դիլիջանը միջին լեռնային անտառային գոտու տիպիկ կլիմայական առողջավայր է, որի հիմնական բուժական գործոններն են միջին և բարձր լեռնային կլիման, բարենպաստ թթվածնային ռեժիմը, անկրկնելի լանդշաֆտային առանձնահատկությունները, բուժիչ հանքային ջրերի առկայությունը: Դիլիջան առողջարանային քաղաքի բնական արժեքվոր հարստություններից է անտառը, որը կազմում է 34000 հեկտար տարածք: Անտառի բուսական և կենդանական աշխարհի պահպանման, հարստացման և տեղական

[8] Դիլիջան համայնքի պաշտոնական կայք՝ https://dilijancity.am/Pages/CustomPage/?CustomPageID=722b890c-cc0b-4c5d-bdf2-30fbebab4291

պայմաններում նոր տեսակների ստացման նպատակով 1958 թվականին կազմակերպվել է պետարգելոց, որի բազայի վրա 2002 թվականին ստեղծվել է «Դիլիջան ազգային պարկը»:
Անտառային զանգվածը կազմում է ազգային պարկի տարածքի 94%-ը, անտառում աճում են շուրջ 40 տեսակի արժեքավոր ծառատեսակներ և 18 տեսակի թփեր: Հիմնական անտառ կազմող ծառատեսակներն են կաղնին, հաճարենին, բոխին:
Սաղարթավոր տերևաթափ ծառատեսակներից տարածված են նաև թխկու, կեչու, հացենու, ուռենու, լորենու, թեղու և այլ տեսակներ:
Ասեղնատերև ծառատեսակներից կազմված անտառներն ազգային պարկում գրավում են սահմանափակ տարածք: Այստեղ աճում են երկարակյաց կենու 300-400 տարեկան ծառեր , որոնք ունեն մինչև 25 մետր բարձրություն և բնի 80-100 սմ տրամագիծ: Երրորդական ժամանակշրջանից եկած այս ծառատեսակների պուրակներից մեկը, որը գտնվում է Գետիկի ավազանում ամենախոշորն է Անդրկովկասում: Որպես բնափայտ հատկապես բարձր են գնահատվում կաղնու, հաճարենու և բոխու բնափայտը:
Պարկի տարածքում աճում են նաև վայրի մրգատուներ՝ տանձենի, խնձորենի, սալորենի:
Թփատեսակներից հաղիպում են մորենի, տիպենի, իլենի, փշարմավ, մրտավարդ, հապալասենի, հաղարջենի, կակտոշենի, հասմիկ, սգի, գկեռ, մամուխ փշավոր, մոշենի, քարամոշ և այլն:
Ըստ օգտագործման նշանակության՝ պարկի բուսատեսակներից հանդիպում են 123 սննդում օգտագործվող տեսակներ:
Աճում են շուրջ 180 դեղաբույսեր (անթառամ, դաղձ, ուրցր, մեղրածուծ, լոշտակը, մալտակը և այլն):
Անտառում շատ են նաև սնկերի տեսակները, որոնց մեծ մասը օգտագործվում են մարդու սննդում:
Հարուստ է ազգային պարկի կենդանական աշխարհը:
Կաթնասուններից այստեղ հանդիպում են գորշ արջ, գայլ, կզաքիս, ջրասամույր, լուսան, անտառային կատու, պարսկական սկյուռ, անտառային քնամուկ, ոզնի, այծյամ, ազնվացեղ եղջերու, վայրի խոզ և այլն:
Անտառի բնորոշ թռչնատեսակներից են մարեհավը, լորը, գորշ կաքավը, կասպիական հնդկահավը, վայրի աղավնին, սպիտակագլուխ անգղը, գառնանգղը, թզուկ արծիվը, բերկուտը, բազեների բազմաթիվ տեսակներ:
Սողունների դասից հանդիպում են մողեսների, օձերի, և կրիաների կարգի ներկայացուցիչներ:
Երկկենցաղներից հանդիպում են կանաչ դոդոշը, անդրկովկասյան գորտը:
Ձկներից առավել շատ տարածված են կարմրախայտը, կողակը, կարասը:
Պարկի տարածքում խստիվ արգելվում է ձկնորսական, որսորդական և դեղագործական նպատակներով կենդանիների որսը:
Քաղաքն ունի էկոտուրիզմի զարգացման մեծ հնարավորություններ և արդեն որոշակի քայլեր են կատարվում դրանց իրականացման ուղղությամբ: Քաղաքի հյուսիսային մասում 1400 մ. բարձրության վրա է գտնվում Պարզ լիճը: Այն ունի շուրջ 2 հա մակերես, միջին խորությունը 8 մետր է: Պարզ լճից դեպի արևելք, Գոշ գյուղից 3 կմ հեռավորության վրա, 1500 մ բարձրության վրա է գտնվում Գոշի (Տզկա) լիճը: Քաղաքի ընդհանուր բնապատկերին առանձին հմայք է հաղորդում Աղստև գետն իր վտակներով: Այն սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի հյուսիս արևմտյան լեռնալանջերից (2980 մ. բարձրությունից) և թափվում Քուռ գետը: Գետի ընդհանուր երկարությունը 133 կմ է: Տարեկան հոսքը կազմում է 256 մլն խոր. մետր: Ձախակողմյան վտակներից են Բլդանը և Ղշտողանը, որոնք քաղաքի կենտրոնական մասում միանում են Աղստևին: Թեղուտ գյուղի մոտակայքում նրան է միանում Հաղարծին վտակը, իսկ ներքին Գոշ գյուղի սկզբնամասում ամենամեծ վտակը՝ Գետիկը:[9]

Ֆոկուս խմբային քննարկումների և անհատական հարցազրույցների արդյունքում ստացված տվյալներ՝

- **Բնակչության նվազման կամ աճի միտում (միգրացիա).** Բնակչության թիվը որոշակիորեն աճել է՝ Ռուս-Ուկրաինական և Արցախյան պատերազմների հետևանքով հիմնականում:
- **Եկամտի հիմնական աղբյուրները.** Մարդկանց եկամտի հիմնական աղբյուրներն են՝ տուրիզմ և սպասարկման ոլորտ, շինարարության ոլորտ, պետական կառույցներում աշխատանք, ֆերմաներ,

[9] 22 Տավուշի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայք՝ http://tavush.mtad.am/xoshor/

առևտրային գործունեություն, հյուրանոցային ոլորտ, հյուրատներ, ռեստորաններ և սրճարաններ, հասարակական կառույցներ, կրթական հաստատություններ, կենտրոնական բանկ և այլն, արտագնա աշխատանքը շատ քիչ է:

- **Միջին ամսական եկամուտը մեկ շնչի հաշվով.** 150,000-200,000 դրամ
- **Տեղական վերամշակող ձեռնարկությունների կամ փոքր բիզնեսների առկայություն.** «Դիլի» կաթնամթերքի արտադրամաս, գարեջրի գործարան, լիմոնադի արտադրամասեր, «Հնձան» բնական հյութերի արտադրամաս, հանքային ջրի գործարանն այս պահին չի աշխատում:
- **Ճանապարհների, դպրոցների և մանկապարտեզների վիճակը.** Քաղաքի ճանապարհները հիմնականում ասֆալտապատ են, մի քանի փողոցներ կան, որ շտկման կարիք ունեն (պետական ծրագրեր կան այդ ուղղությամբ), կան յոթ դպրոց, մեկ միջնակարգ, մեկ ավագ, Դիլիջանի միջազգային դպրոցը, երկու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, արվեստի պետական քոլեջ, գեղարվեստի դպրոց, ABC նախակրթարան, մանկապարտեզներ՝ վեց համայնքային, երկու մասնավոր::
- **Համայնքի ապահովվածություն խմելու և ոռոգման ջրով, էլեկտրաէներգիայով և գազով**. Կենտրոնացված ջրամատակարարում կա, ոռոգման ջուր, էլեկտրաէներգիա, գազաֆիկացում կա (թաղամաս կա, որ գազաֆիկացված չէ, բայց ծրագիր կա), լուսավորություն կա:
- **Հեռավորությունը մոտակա բժշկական կենտրոնից**. Դիլիջանում կա բժշկական կենտրոն, որից օգտվում են բնակիչները:
- **Այս պահին համայնքում իրականացվող պետական և միջազգային ծրագրերը**. Գետափնյա փողոցի ասֆալտապատում և մայթերի վերանորոգում, փոսալցումներ, Այգեստան, Թումանյան, Շամախյան և այլ փողոցների ասֆալտապատում, բազմահարկերի վերելակների փոխարինում՝ պետական սուբվենցիաներով, համայնքն իր միջոցներով հուշարձանի տարածքում նոր հուշարձան է կառուցում, SOS – սոցիալապես անապահով ընտանիքների և արցախցիների հետ ծրագրեր, Հույսի Կամուրջ ՀԿ՝ հաշմանդամություն ունեցող անձանց հետ կապված ծրագրեր, YCCD, Green Rock Foundation, Իմպուլս ֆոնդ/ IDEA Foundation և այլն:
- **Նախկինում իրականացված ծրագրերի ազդեցությունը համայնքի վրա.** Տեղահանվածների տնտեսական հզորացման ծրագիր - SOS, բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում, ասֆալտապատում, մայրուղի M4-ի ասֆալտապատում, սպորտդպրոցի վերանորոգում – Green Rock, Հայկական գործվածքի թանգարանի վերանորոգում:
- **Հողի օգտագործումը (արոտավայրեր, վարելահողեր).** Կիրառելի չէ:
- **Համայնքի հեռավորությունը պահպանվող տարածքից.** Քաղաքի տարածքում է:
- **Տարածքի կենսաբազմազանությունը կամ բնական հարստությունը.** Աղվես, սկյուռ, կզաքիս, եղջերու և այլն:
- **Համայնքի առավել խոցելի խմբերը (բազմազավակ ընտանիքներ, փախստականներ, հաշմանդամություն ունեցող անձինք).** Խոցելի բոլոր խմբերի ներկայացուցիչներ կան քաղաքում:
- **Հարաբերությունները համայնքի տարբեր սոցիալական խմբերի միջև**. քաղաք է, հիմնականում շփումները բակերի, թաղամասերի շրջանակում, դրացիական կամ կոլեկտիվ, աշխատանքային բնույթի են:
- **Համայնքում գործող ՀԿ-ներ, կոոպերատիվներ կամ երիտասարդական խմբեր.** YCCD, Դիլիջանի համայնքային կենտրոն, Green Rock Foundation, Երիտասարդական գաղափարներ ՀԿ և այլն:
- **Համայնքի մասնակցություն որոշումների կայացմանը.** հանրային քննարկումներին կարելի է ասել՝ չեն մասնակցում, շատ մեծ դժվարությամբ, հիմնականում անձնական հարցերով են գալիս համայնքապետարան, իրազեկման պասիվ միջոցները չեն օգնում, մոտիվացիա էլ չունեն, հավանաբար, աշխարհագրորեն ցրված և տուրիստական քաղաք լինելու գործոնն է այստեղ մեծ դերակատարում ունենում[10]:

[10] Տեղում խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ

Ամփոփելով համայնքի վերաբերյալ հավաքագրված հիմնական տվյալները՝

Ժողովրդագրություն և սոցիալական դինամիկա. Խոշորացված համայնքի կենտրոնն է, մշակութային և կրթական հաբ (UWC Dilijan, Կենտրոնական բանկ, Թումո կենտրոն և այլն): Բնակչությունը սոցիալապես շերտավորված է՝ կան բարձր եկամուտ ունեցող ներգաղթյալներ և սոցիալապես խոցելի տեղաբնիկներ:

Տնտեսական գործունեություն. Տուրիզմ, հյուրատնային և ռեստորանային բիզնես, սպասարկման ոլորտ, արհեստներ: Գյուղատնտեսությունը երկրորդական պլանում է:

Ենթակառուցվածքներ. Զարգացած է՝ համեմատած գյուղական բնակավայրերի հետ, սակայն ծայրամասային թաղամասերում դեռևս կան սելավատարերի խնդիրներ: Համայնքում չկան կրթական-սպորտային կենտրոններ, մեծահասակների ժամանցի կենտրոն:

Բնական ռեսուրսներ և ռիսկեր. Շրջապատված է Ազգային պարկով: Տուրիստական մեծ հոսքերը առաջացնում են թափոնների կառավարման և անտառային արահետների դեգրադացիայի ռիսկեր:

ՖՄՄ ներուժ. Կանաչ և կայուն տուրիզմի ստանդարտների ներդրում, թափոնների տեսակավորում և վերամշակում, էկո-արհեստանոցներ[11], կանանց ձեռներեցության աջակցություն:

4.5. Հաղարծին բնակավայր (Դիլիջան բազմաբնակավայր համայնք, Տավուշի մարզ)

Մակերես՝ 36.7 կմ²
Նախկինում գյուղը կոչվել է Զարխեչ, հիմնադրվել է 1815թ.-ին, Աչաջրից տեղափոխված բնակիչների կողմից: Ինչպես հյուսիս - արևելյան մյուս բնակավայրերը, այնպես էլ նախկին Զարխեչը, որն ուներ 35 ծուխ, 19-րդ դարի սկզբին մտել է ռուսական կայսրության կազմի մեջ:
Խորհրդային տարիներին այն կոչվում էր Կույբիշև, իսկ 1990 - ական թվականներից՝ Հաղարծին: Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն ու հողագործությունն է: Գյուղն ունի 3 մասնաշենքերով միջնակարգ դպրոց: 2 խմբով գործում է մանկապարտեզը՝ 40 սաներով: Մշակույթի տունը տիպային է, այն 400 տեղանոց է: Նշված օբյեկտները վերանորոգման կարիք ունեն: Ազգամիջյան կռիվների ընթացքում գյուղը տվել է 5 զոհ և 2 հաշմանդամ:
Վերջին 5 տարիների ընթացքում իրականացվել են մի շարք ծրագրեր:
Համայնքի միջոցներով վերանորոգվել է գիշերային լուսավորության ցանցը, անց է կացվել 3 կմ խմելու ջրագիծ, 4 կմ գյուղամիջյան ճանապարհ է խճապատվել, տեղադրվել է արբանյակային ալեհավաք, վերանորոգվել է գյուղապետարանի շենքը, հարթեցվել է 30 կմ հեռագնա սարամասի ճանապարհը:
1. Հեռավորությունը Երևանից՝ 110 կմ, մարզկենտրոնից՝ 23կմ, ՀՀ պետական սահմանից՝ 41 կմ
2. Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1050 մ
3. Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը + 19C է,

[11] **Էկո-արհեստանոց՝** սոցիալ-տնտեսական և բնապահպանական կայուն մոդել, որը միավորում է տեղական բնական ռեսուրսների խնայողական վերամշակումը, ավանդական արհեստների վերակենդանացումը և համայնքային խոցելի խմբերի (հատկապես կանանց ու երիտասարդների) զբաղվածության խթանումը: Այսպիսի տարածքները կարող են ծառայել թե՛ որպես էկոլոգիապես մաքուր, բարձրարժեք ձեռագործ արտադրանքի (օրինակ՝ ազգային պարկի թափուկ փայտերից հուշանվերներ, բնական ներկերով տեքստիլ, վայրի բարիքների փաթեթավորում) պատրաստման կենտրոններ, և թե՛ որպես ինտերակտիվ կրթական ու զբոսաշրջային հարթակներ, որտեղ այցելուները մասնակցում են վարպետաց դասերի՝ ստեղծելով կայուն եկամուտ բնակավայրի համար՝ առանց շրջակա միջավայրին վնաս հասցնելու:

ձմռանը՝ -2C
4. Պատմամշակութային կոթողներ՝ Հաղարծնի վանքային համալիր
5. Տնտեսությունների թիվ՝ 999 ընտանիք
6. Համայնքի զբաղեցրած տարածքը՝ 2775.88 հա, որից՝ 1055.29 հա արոտներ, 157.65 հա վարելահողեր
7. Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, անասնապահություն
8. Ապահովվածությունը խմելու և ոռոգման ջրով՝ խմելու ջրով բավարար, ոռոգման ջրով անբավարար
9. Գազիֆիկացված է
10. Ճանապարհների վիճակը՝ բավարար
Համայնքն ունի՝
1. Դպրոց՝ 1000 աշակերտական տեղով
2. Բուժկետ
3. Մշակույթի տուն
4. Համայնքային կենտրոն
5. Մանկապարտեզ
6. Փոստային բաժանմունք[12]

Ֆոկուս խմբային քննարկումների և անհատական հարցազրույցների արդյունքում ստացված տվյալներ՝

- **Բնակչության ընդհանուր թիվը, տնային տնտեսությունների քանակը և տարիքային կազմը.** 4800+ բնակիչ, 810 բաց տնային տնտեսություն:
- **Բնակչության նվազման կամ աճի միտում (միգրացիա).** Վերջին տարիներին նկատվում է բնակչության թվաքանակի աննշան աճ:
- **Եկամտի հիմնական աղբյուրները.** Անասնապահություն, հողագործություն, առևտուր, հյուրատնային տնտեսություններ, մեքենայի առքուվաճառքով են զբաղվում, արտագնա աշխատանքով: Տուրիզմ (մեքենաներով տուրեր), պետական աշխատողներ, նպաստով ապրող ընտանիքներ կան, արտագնա աշխատանքով, հողագործությամբ և անասնապահությամբ զբաղվող ընտանիքներ էլ կան, թեև վարելահողերը շատ չեն օգտագործվում, քանի որ բերրի չեն հողերը, ոռոգման ջուր չկա:
- **Միջին ամսական եկամուտը մեկ շնչի հաշվով.** 80,000 դրամ
- **Տեղական վերամշակող ձեռնարկությունների կամ փոքր բիզնեսների առկայություն.** Գյուղում կան հացաբուլկեղենի 2-3 փուռ, բլոկի արտադրամաս, լիմոնադի արտադրամասեր, սառը սուրճի, սառը թեյի արտադրամաս, խանութները շատ են՝ կահույքի, խառը, մթերային, կան վարսավիրանոցներ և այլն:
- **Ճանապարհների, դպրոցների և մանկապարտեզների վիճակը.** Տուֆապատվում են հիմա երկրորդային փողոցները՝ վեց հատ, գլխավոր փողոցը՝ ասֆալտապատ է, գյուղում կա մեկ դպրոց՝ միջնակարգ, նախակրթարան՝ դպրոցին կից, ինչպես նաև մանկապարտեզ:
- **Համայնքի ապահովվածություն խմելու և ոռոգման ջրով, էլեկտրաէներգիայով և գազով**. Խմելու ջրով գյուղն ապահովված է, բայց որակը լավը չէ, խնդիր կա, ոռոգման ջուր չկա, էլեկտրաէներգիա, գազաֆիկացում կա, փողոցային լուսավորություն կա:
- **Հեռավորությունը մոտակա բժշկական կենտրոնից**. Գյուղում կա ամբուլատորիա՝ տաս և ավել աշխատակցով, Թեղուտից և հարակից այլ գյուղերից էլ են այստեղ գալիս:
- **Այս պահին համայնքում իրականացվող պետական և միջազգային ծրագրերը**. Տուֆապատում (սուբվենցիոն ծրագրով), ջերմոցների և ծառատնկման մասով աշխատանքներ են տարվում ոչ պետական ծրագրով, ջրի ֆիլտրացման համար են դիմել (պարզ չէ դեռևս՝ կստացվի, թե ոչ):

[12] ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայք՝ http://tavush.mtad.am/xoshor/

- **Նախկինում իրականացված ծրագրերի ազդեցությունը համայնքի վրա.** Պետական ծրագրերով՝ լուսավորության անցկացում, գլխավոր ճանապարհների վերանորոգում (հիմա էլ ընթացքի մեջ են), պետական միջոցներով արգելապատնեշների կառուցում և այլն:
- **Հողի օգտագործումը (արոտավայրեր, վարելահողեր).** Հողագործությամբ ավելի քիչ են զբաղվում, տնամերձերում, հիմնականում վարելահողերը որպես խոտհարք են օգտագործում, սարերը ավելի շատ որպես արոտավայրեր, հատուկ արածեցման պլան չունեն: Շատ անհատական, փոքր ծավալներով են զբաղվում հողագործությամբ, ավելի շատ՝ անասնապահությունն է զարգացած:
- **Համայնքի հեռավորությունը պահպանվող տարածքից.** Ազգային պարկի տարածքն է:
- **Տարածքի կենսաբազմազանությունը կամ բնական հարստությունը.** Ծնեբեկ, սինդրիկ, ուրց, ավելուկ, արծիվ, օձեր, չղջիկներ, գայլ, շնագայլ, արջ, եղնիկ:
- **Համայնքի առավել խոցելի խմբերը (բազմազավակ ընտանիքներ, փախստականներ, հաշմանդամություն ունեցող անձինք).** Փախստականներ կան, երեք ընտանիք, հաշմանդամություն ունեցող անձիք կան, շատ են բազմազավակ ընտանիքները, խոցելի խմբեր կան:
- **Հարաբերությունները համայնքի տարբեր սոցիալական խմբերի միջև**. Բնակիչների հարաբերությունները շատ նորմալ, բարի-դրացիական են:
- **Համայնքում գործող ՀԿ-ներ, կոոպերատիվներ կամ երիտասարդական խմբեր.** Չկան:
- **Համայնքի մասնակցություն որոշումների կայացմանը.** Ժողովների են մասնակցում, հիմնականում անձնական կապերի միջոցով տեղեկացնելով են գալիս, մասնակցում[13]:

Ամփոփելով համայնքի վերաբերյալ հավաքագրված հիմնական տվյալները՝

Ժողովրդագրություն և սոցիալական դինամիկա. Ամենամեծ գյուղական բնակավայրերից է՝ ակտիվ և ձեռներեց բնակչությամբ: Առկա է երիտասարդության բավականին բարձր թիվ:

Տնտեսական գործունեություն. Անասնապահություն, հողագործություն, հյուրատնային բիզնես (Հաղարծին վանական համալիրի մոտ լինելու շնորհիվ) և զբոսաշրջային ծառայություններ, առևտրային գործունեություն, արտագնա աշխատանք:

Ենթակառուցվածքներ. Մաքուր խմելու ջրի խնդիր, ներհամայնքային ճանապարհների բարելավման կարիք՝ դեպի տուրիստական վայրեր, դպրոցի անմխիթար վիճակ, սպորտային խմբակների և ժամանցային վայրերի բացակայություն, աղբահանության անբավարար վիճակ:

Բնական ռեսուրսներ և ռիսկեր. Ազգային պարկի հետ սահմանակցությունը երբեմն առաջացնում է հակասություններ բնակիչների տնտեսական գործունեության պատճառով:

ՖՄՄ ներուժ. Հյուրատների էներգաարդյունավետության բարձրացում, էկո-մշակաբույսերի արտադրության հիմնում, խմելու ջրի ֆիլտրացման արդիական համակարգի ներդրում, վերամշակման ձեռնարկությունների կամ արտադրամասերի հիմնում և գործարկում:

4.6. Թեղուտ բնակավայր (Դիլիջան բազմաբնակավայր համայնք, Տավուշի մարզ)

Մակերես՝ 9.5 կմ²
Գյուղը հիմնադրվել է 1925թ., այն սկզբում եղել է նախկին Զարխեչ գյուղի թաղամասերից մեկը, հետագայում որպես առանձին գյուղ անվանվել է Հաղարծին, այնուհետև՝ Թեղուտ:

[13] Ֆոկուս խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ

Գյուղը առանձին բնակավայրի կարգավիճակ է ստացել ՀՀ Գերագույն խորհրդի 1993թ. նոյեմբերի 5-ի որոշմամբ:
Որպես Դիլիջանի քաղաքամերձ համայնք, գյուղի բնակիչների զգալի մասը ժամանակին աշխատում էր քաղաքի տարբեր հիմնարկ-ձեռնարկություններում: Այժմ գյուղացիների հիմնական զբաղմունքն անասնապահությունը և հողագործությունն է:
Թեղուտից մի քանի կիլոմետր հեռավորության վրա են գտնվում Հաղարծին և Ջուխտակ վանքերը, որոնք հայկական ճարտարապետության լավագույն նմուշներից են:
1. Հեռավորությունը Երևանից՝ 109 կմ, մարզկենտրոնից՝ 26 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 42 կմ
2. Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1550 մ
3. Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը +19C, ձմռանը՝ -2C
4. Պատմամշակութային կոթողներ՝ Հաղարծին վանքային համալիր
5.Տնտեսությունների թիվը՝ 435 ընտանիք
6. Համայնքի զբաղեցրած տարածքը՝ 248.01 հա, որից՝ 94.31 հա արոտներ, 10.67 հա վարելահողեր
7. Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, անասնապահություն
8. Ապահովվածությունը խմելու և ոռոգման ջրով՝ խմելու ջրով բավարար, ոռոգման ջրով անբավարար
9. Գազիֆիկացված է
10. Ճանապարհների վիճակը՝ բավարար
Համայնքն ունի՝
1. Դպրոց՝ 500 աշակերտական տեղով
2. Բուժկետ
3. Մշակույթի տուն
4. Համայնքային կենտրոն
5. Մանկապարտեզ /գործող նորակառույց/[14]

Ֆոկուս խմբային քննարկումների և անհատական հարցազրույցների արդյունքում ստացված տվյալներ՝

- **Բնակչության նվազման կամ աճի միտում (միգրացիա).** Աճի միտում կա:
- **Եկամտի հիմնական աղբյուրները.** Տուրիզմ, հյուրանոցա-հյուրատնային տնտեսություն, տուրեր, սպասարկման ոլորտ, շինարարություն, անասնապահություն՝ քիչ ծավալներով, հողագործություն չկա, արտագնա աշխատանքը հիմա շատ քիչ է:
- **Միջին ամսական եկամուտը մեկ շնչի հաշվով.** 100,000 դրամ
- **Տեղական վերամշակող ձեռնարկությունների կամ փոքր բիզնեսների առկայություն.** Արտադրամաս չկա, չրանոց ու երկու ջերմոցներ կան, ավելի փոքր, խանութներ՝ 2-3 հատ, 130 հյուրանոցա-հյուրատնային բիզնեսներ:
- **Ճանապարհների, դպրոցների և մանկապարտեզների վիճակը.** Ճանապարհների վիճակը. գյուղամիջյան՝ լավ, երկրորդային՝ հողային, բայց շարունակվում են աշխատանքները, մեկ դպրոց՝ 258 աշակերտով, մեկ մանկապարտեզ՝ մինչև 60 երեխա:
- **Համայնքի ապահովվածություն խմելու և ոռոգման ջրով, էլեկտրաէներգիայով և գազով**. Կենտրոնացված կոյուղի կա, խմելու ջրով գյուղն ապահովված է (համայնքային է), ոռոգման ջուր չկա, փողոցային լուսավորության վիճակն անբավարար է, միայն գլխավոր ճանապարհն է լուսավորված (այն էլ լիարժեք չի աշխատում, անսարքություններ կան):
- **Հեռավորությունը մոտակա բժշկական կենտրոնից**. Գյուղում կա բուժկետ՝ 2 բուժքույր, անհրաժեշտության դեպքում այցելում են Հաղարծին գյուղի ամբուլատորիա՝ պոլիկլինիկա որպես, մոտ 3 կմ հեռավորությամբ կամ Դիլիջանի բժշկական կենտրոն՝ մոտ 10 կմ:

[14] ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ՝ http://tavush.mtad.am/xoshor/

- **Այս պահին համայնքում իրականացվող պետական և միջազգային ծրագրերը**. Պետական սուբվենցիայով՝ փողոցների տուֆապատման աշխատանքներ, դպրոցի վերանորոգում՝ պետական բյուջեի միջոցներով:
- **Նախկինում իրականացված ծրագրերի ազդեցությունը համայնքի վրա.** Ասֆալտապատում, ջրագծի անցկացում՝ պետական բյուջեով, ջերմոցի կառուցում՝ ՄԱԿ-ի պարենի կազմակերպություն:
- **Հողի օգտագործումը (արոտավայրեր, վարելահողեր).** Մի քանի հոգի ունեն ֆերմերային տնտեսություն, գյուղում չեն պահում, շատ չի հողային ֆոնդը, հիմնականում որպես խոտհարքեր են օգտագործվում, բայց նույնիսկ որպես խոտհարքեր էլ լիարժեք չեն օգտագործվում:
- **Համայնքի հեռավորությունը պահպանվող տարածքից.** Անմիջապես ազգային պարկի տարածքն է:
- **Տարածքի կենսաբազմազանությունը կամ բնական հարստությունը.** շնագայլ, եղնիկ, գայլ, աղվես, կզաքիս, վայրենակերպ, ուրց, մանուշակ՝ կարմիր գրքային:
- **Համայնքի առավել խոցելի խմբերը (բազմազավակ ընտանիքներ, փախստականներ, հաշմանդամություն ունեցող անձինք).** Լեռնային Ղարաբաղից տեղահանված երեք ընտանիք, բազմազավակ ընտանիքները շատ են:
- **Հարաբերությունները համայնքի տարբեր սոցիալական խմբերի միջև**. Բնակիչների միջև հարաբերությունները բարի-դրացիական են:
- **Համայնքում գործող ՀԿ-ներ, կոոպերատիվներ կամ երիտասարդական խմբեր.** Չկան, բայց մասնակցել են Գրին Ռոք Հիմնադրամի, Դիլիջանի երիտասարդական կենտրոնի աշխատանքներին:
- **Համայնքի մասնակցություն որոշումների կայացմանը.** Դժվարությամբ են մասնակցում[15]:

Ամփոփելով համայնքի վերաբերյալ հավաքագրված հիմնական տվյալները՝

Ժողովրդագրություն և սոցիալական դինամիկա. Սահմանակից է Ազգային պարկին (պարկի տարածքում է), բնակչության թվաքանակը հիմնականում կայուն է:

Տնտեսական գործունեություն. Զբոսաշրջային գործունեություն (հյուրանոցա-հյուրատնային տնտեսություններ), սպասարկման ոլորտում ծառայությունների մատուցում, անտառի բարիքների հավաքչություն (սունկ, հապալաս, դեղաբույսեր), փոքր ծավալներով անասնապահություն:

Ենթակառուցվածքներ. Փողոցների գիշերային լուսավորության արդիականացման և ընդլայնման, ոռոգման ջրի ցանցի կառուցման, ինչպես նաև գյուղապետարանի շենքի վերանորոգման կարիք կա:

Բնական ռեսուրսներ և ռիսկեր. Անտառային ռեսուրսների շահագործում:

ՖՄՄ ներուժ. Փորձարարական տուրիզմի զարգացում, անտառի բարիքների հավաքման, չորացման և փաթեթավորման արտադրամասերի հիմնում (կանանց կոոպերատիվներ), ջերմոցային տնտեսությունների հիմնում, արահետների կահավորում, մեղվաբուծության ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում:

[15] Ֆոկուս խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ

4.7. Հովք բնակավայր (Դիլիջան բազմաբնակավայր համայնք, Տավուշի մարզ)

Մակերես՝ 13.8կմ²
Հեռավորությունը համայնքի վարչական կենտրոն Դիլիջանից՝ 22 կմ
Հովք գյուղը մինչև հայ-ադրբեջանական հակամարտությունը բնակեցված է եղել ադրբեջանցիներով: 90-ական թվականներին այն բնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթված հայերով: Նախկինում գյուղը կոչվել է Հախկիլու, Վուրղուն, իսկ այժմ ստացել է հայեցի Հովք անունը: Գործում է միջնակարգ դպրոցը:
1. Հեռավորությունը Երևանից՝ 116 կմ, մարզկենտրոնից՝ 17 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 30 կմ
2. Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1190 մ
3. Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը + 19C է, ձմռանը՝ -2C
4. Պատմամշակութային կոթողներ չկան
5. Տնտեսությունների թիվը 195 ընտանիք
6. Համայնքի զբաղեցրած տարածքը 5406.30 հա, որից՝ 403.30 հա արոտներ, 152.04 հա վարելահողեր
7. Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, անասնապահություն
8. Ապահովվածությունը խմելու և ոռոգման ջրով՝ խմելու ջրով բավարար, ոռոգման ջրով անբավարար
9. Գազիֆիկացված չէ
10. Ճանապարհների վիճակը՝ բավարար

Համայնքն ունի՝
1. Դպրոց՝ 120 աշակերտական տեղով
2. Բուժկետ
3. Համայնքային կենտրոն[16]

Ֆոկուս խմբային քննարկումների և անհատական հարցազրույցների արդյունքում ստացված տվյալներ՝

- **Բնակչության ընդհանուր թիվը, տնային տնտեսությունների քանակը և տարիքային կազմը.** 470՝ բնակիչների ընդհանուր թիվ, 122՝ տնային տնտեսություններ
- **Բնակչության նվազման կամ աճի միտում (միգրացիա).** Աճ կա, բայց աննշան, մոտավորապես 8-10 բնակիչ:
- **Եկամտի հիմնական աղբյուրները.** Անասնապահություն, գյուղատնտեսական աշխատանքներ՝ ավելի քիչ, վերջին տարիներին զարգանում է հյուրատնային բիզնեսը (մի քանի հատ կան), արտագնա աշխատանք (սեզոնային, ավելի շատ՝ երիտասարդները), հայրի հավաքչություն (օրինակ՝ ծնեբեկ, սինդրիկ, շուշան, ընկույզ, բոխի՝ կրկին սեզոնային):
- **Միջին ամսական եկամուտը մեկ շնչի հաշվով.** 30,000-40,000 դրամ
- **Տեղական վերամշակող ձեռնարկությունների կամ փոքր բիզնեսների առկայություն.** Ջերմոցային տնտեսություններ և չրանոցներ կան, մուրաբաների արտադրամասեր, մեկ խանութ՝ խառը:
- **Ճանապարհների, դպրոցների և մանկապարտեզների վիճակը.** Ընդամենը մեկ ճանապարհ է տուֆապատ, մնացածը՝ հողային են (գրունտային), կա մեկ դպրոց՝ միջնակարգ - մոտ 60 աշակերտով, մոբիլ մանկապարտեզ:
- **Համայնքի ապահովվածություն խմելու և ոռոգման ջրով, էլեկտրաէներգիայով և գազով**. Գյուղում ջուր կա խմելու, բայց շատ աղտոտված է, ֆիլտրման կարիք կա, ոռոգման ջուր չկա, էլեկտրաէներգիա կա, գազաֆիկացում կա, բացի մեկ թաղամասից, որը սողանքի վտանգի տակ է, այդտեղ չկա, կոյուղի չկա:

[16] ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայք՝ http://tavush.mtad.am/xoshor/

- **Հեռավորությունը մոտակա բժշկական կենտրոնից**. Գյուղում կա բուժկետ և բուժքույր, անհրաժեշտության դեպքում այցելում են Իջևան կամ Դիլիջանի բժշկական կենտրոն:
- **Այս պահին համայնքում իրականացվող պետական և միջազգային ծրագրերը**. Մասնակցային բյուջետավորումով հուշաղբյուրի և պուրակի կառուցում, տուֆապատում՝ մեկ ճանապարհ, մայրուղուց մինչև գյուղապետարան (3,7 կմ):
- **Նախկինում իրականացված ծրագրերի ազդեցությունը համայնքի վրա.** Կանաչ արահետ ՀԿ-ի միջոցով ջերմոցներ են կառուցվել, Դիակոնիան էլ է օգնել ջերմոցներով, տնկիներ, մանկական մահճակալներ, պայմանագրերը ավարտված են, բայց վերահսկողություն է իրականացվում հինգ տարի առնվազն: Հավեր ու մեղուներ են բաժանվել գյուղացիներին (գյուղինստիտուտը որքան հիշում են), պետական միջոցներով կանգառ է կառուցվել, մանկապարտեզի խաղահրապարակ է կառուցվել, դպրոցն էլ է մի քանի անգամ ինտենսիվ այգու հիմնման ծրագրի մասնակցել՝ Կանաչ արահետ ՀԿ-ով, Սմարթ գրատախտակ է ձեռքբերվել՝ Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն ՀԿ-ի հետ համագործակցությամբ:
- **Հողի օգտագործումը (արոտավայրեր, վարելահողեր).** Ցնամերձերը մշակում են, վարելահողերը հիմնականում որպես խոտհարքեր են օգտագործվում, արոտավայրերի արածեցման պլան չկա:
- **Համայնքի հեռավորությունը պահպանվող տարածքից.** Անմիջապես ազգային պարկի տարածքն է:
- **Տարածքի կենսաբազմազանությունը կամ բնական հարստությունը.** Փոշնի, լորենի, հոն, ուրց, պլոճ, սգնի, բոխի /բույս, վայրի ծնեբեկ, շուշան, եղջերու, սպիտակագլուխ անգղ և այլն:
- **Համայնքի առավել խոցելի խմբերը (բազմազավակ ընտանիքներ, փախստականներ, հաշմանդամություն ունեցող անձինք).** Բազմազավակ կան, օրինակ՝ մեկ վեց երեխա ունեցող ընտանիք (տուն էլ չունեն), միայնակ ծերեր կան, մեկ անչափահաս երեխա՝ հաշմանդամություն ունեցող:
- **Հարաբերությունները համայնքի տարբեր սոցիալական խմբերի միջև**. Աջակցող են, փոխօգնության մշակույթ կա:
- **Համայնքում գործող ՀԿ-ներ, կոոպերատիվներ կամ երիտասարդական խմբեր.** Կանաչ Արահետ ՀԿ, Հույսի Կամուրջ ՀԿ, Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն:
- **Համայնքի մասնակցություն որոշումների կայացմանը.** Ժողովների միջոցով, ակտիվ են երիտասարդները[17]:

Ամփոփելով համայնքի վերաբերյալ հավաքագրված հիմնական տվյալները՝

Ժողովրդագրություն և սոցիալական դինամիկա. Համեմատաբար փոքր, մեկուսացված բնակավայր է՝ բարձրադիր գոտում: Ներկայումս տարիքային կազմը համամասնորեն է բաշխվում, սակայն հետագայում ռիսկ կա բնակավայրի «ծերացման», քանի որ աշխատատեղերի բացակայության պատճառով երիտասարդների համար գյուղն այլևս գրավիչ չի լինի:

Տնտեսական գործունեություն. Անասնապահություն, հողագործություն՝ ավելի քիչ, հյուրատնային բիզնես, արտագնա աշխատանք, վայրի հավաքչություն:

Ենթակառուցվածքներ. Ճանապարհների վատ վիճակ, խմելու և ոռոգման ջրի խնդիր, սահմանափակ տրանսպորտային կապ Դիլիջանի հետ:

Բնական ռեսուրսներ և ռիսկեր. Սողանքային գոտիներ, մաքուր խմելու ջրի խնդիր:

[17] Ֆոկուս խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ

ՖՄՄ ներուժ. Ջրային ռեսուրսների կառավարման արդիականացում (կաթիլային համակարգեր, ջրամբարներ, ֆիլտրացման համակարգ), անասնապահական մթերքների վերամշակում, արևային էներգիա:

4.8. Աղավնավանք բնակավայր (Դիլիջան բազմաբնակավայր համայնք, Տավուշի մարզ)

Մակերես՝ 22.6 կմ²
Մինչև 1988թ. գյուղը բնակեցված է եղել աղրբեջանցիներով և կոչվել է Սալահ: Հետագայում այստեղ վերաբնակեցվել են Աղրբեջանից բռնագաղթված մեր հայրենակիցները: Կան հավաստի պատմական տվյալներ, որ մինչև մոնղոլ-թաթարական արշավանքները այս տարածքը ևս բնակեցված է եղել հայերով, որի վառ ապացույցներն են միջնադարյան եկեղեցին, խաչքարերն ու այլ շինություններ: Այստեղ 12-րդ դարում կառուցվել է Սուրբ Աստվածածին եկեղեցին՝ իր օժանդակ կառույցներով: Այն ծառայել է նաև որպես ճգնարան:
Եկեղեցին ունի նաև 2-րդ անվանումը՝ Ախնաբաթ կամ Հախնաբաթ: Դրա հետ կապված գոյություն ունի ժողովրդական մի ավանդազրույց, ըստ որի Նաբաթ անունով մի գեղեցկուհու անհույս սիրահարված հայ իշխաններից մեկը ի հիշատակ իր սիրո կառուցել է տալիս եկեղեցին, ինքնասպան լինում և վերջին պահին կանչում է «Ա՛խ Նաբաթ»:
Գյուղը գտնվում է Նոր Գետիկի ափին և ունի շատ նպաստավոր պայմաններ տուրիզմի համար:
1. Հեռավորությունը Երևանից՝ 130 կմ, մարզկենտրոնից՝ 29 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 42 կմ
2. Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1100 մ
3. Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը + 19C է, ձմռանը՝ -3C
4. Պատմամշակութային կոթողներ՝ սբ.Աստվածածին եկեղեցի
5. Տնտեսությունների թիվ 132 ընտանիք
6. Համայնքի զբաղեցրած տարածքը՝ 6887.91 հա, որից՝ 2026.75 հա արոտներ, 102.76 հա վարելահողեր
7. Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, անասնապահություն
8. Ապահովվածությունը խմելու և ոռոգման ջրով՝ խմելու ջրով բավարար, ոռոգման ջրով անբավարար
9. Գազիֆիկացված չէ
10. Ճանապարհների վիճակը՝ բավարար

Համայնքն ունի՝
1. Դպրոց՝ 150 աշակերտական տեղով
2. Բուժկետ
3. Մշակույթի տուն
4. Համայնքային կենտրոն[18]

Ֆոկուս խմբային քննարկումների և անհատական հարցազրույցների արդյունքում ստացված տվյալներ՝

- **Բնակչության ընդհանուր թիվը, տնային տնտեսությունների քանակը և տարիքային կազմը.** 226 – առկա բնակչության թիվ, կան նաև ամառանոցային տներ ունեցող, այլ համայնքի բնակիչներ, 76 – տնային տնտեսություն, երիտասարդները քիչ են ավելի, երեխաները քիչ են
- **Բնակչության նվազման կամ աճի միտում (միգրացիա).** Փոփոխություն չկա՝ կարելի է ասել:

[18] ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայք՝ http://tavush.mtad.am/xoshor/

- **Եկամտի հիմնական աղբյուրները.** Անասնապահություն, շինարարություն, ծառերի աճեցում և վաճառք (ATP)՝ 30-40 ընտանիք սրանով են ապրում, տնամերձ հողերում՝ հողագործություն, վարելահողերը հիմնականում որպես խոտհարքեր են օգտագործվում:
- **Միջին ամսական եկամուտը մեկ շնչի հաշվով.** Դժվարանում են պատասխանել:
- **Տեղական վերամշակող ձեռնարկությունների կամ փոքր բիզնեսների առկայություն.** Միայն հյուրատնային բիզնես, մեկ փոքրիկ խանութ:
- **Ճանապարհների, դպրոցների և մանկապարտեզների վիճակը.** Տուֆապատ են հիմնականում ճանապարհները (այս պահին ընթացքի մեջ են նաև մնացած փողոցները՝ պետական սուբսիդավորմամբ), կա մեկ դպրոց՝ միջնակարգ (կառուցվում է այս պահին պետական ծրագրով) - 35 աշակերտ, մանկապարտեզը մոբիլ է, մինչև ժամը 13:00-ն են երեխաները հաճախում:
- **Համայնքի ապահովվածություն խմելու և ոռոգման ջրով, էլեկտրաէներգիայով և գազով**. Խմելու ջրով ապահովված է, ոռոգման ցանցը կառուցված է կիսով չափ (մեկ թաղամաս)՝ պետական ծրագրով, էլեկտրաէներգիա, գազաֆիկացում կա, լուսավորություն կարելի է ասել՝ չկա, միայն գլխավոր փողոցն է կիսով չափ լուսավորված:
- **Հեռավորությունը մոտակա բժշկական կենտրոնից**. Բուժկետ կա գյուղապետարանի շենքում, ամբուլատորիան Խաչարձանում է, սպասարկում է երկու գյուղերին, ըստ անհրաժեշտության օգտվում են Իջևանի և Դիլիջանի բժշկական կենտրոններից:
- **Այս պահին համայնքում իրականացվող պետական և միջազգային ծրագրերը**. Փողոցների տուֆապատում, դպրոցի կառուցում՝ պետական ծրագրով, ATP - ծառատունկի ծրագիր:
- **Նախկինում իրականացված ծրագրերի ազդեցությունը համայնքի վրա.** Միանշանակ դրական է եղել, կոնկրետ ծրագրեր չեն մատնանշում:
- **Հողի օգտագործումը (արոտավայրեր, վարելահողեր).** Տնամերձերը մշակում են, վարելահողերը հիմնականում որպես խոտհարքեր են օգտագործվում, արոտավայրերի արածեցման պլան չկա:
- **Համայնքի հեռավորությունը պահպանվող տարածքից.** Անմիջապես ազգային պարկի տարածքն է:
- **Տարածքի կենսաբազմազանությունը կամ բնական հարստությունը.** Կենու (կարմրածառ) պուրակ, արջ (շատ), եղնիկ, շնագայլ, լուսան, բազե, սնկերի տեսակներ և այլն:
- **Համայնքի առավել խոցելի խմբերը (բազմազավակ ընտանիքներ, փախստականներ, հաշմանդամություն ունեցող անձինք).** Լեռնային Ղարաբաղից տեղահանված երկու ընտանիքներ կան, կան նաև հաշմանդամություն ունեցող անձանցով ընտանիքներ, բազմազավակ ընտանքիներ նույնպես կան:
- **Հարաբերությունները համայնքի տարբեր սոցիալական խմբերի միջև**. Նորմալ հարաբերություններ են համայնքի տարբեր խմբերի միջև:
- **Համայնքում գործող ՀԿ-ներ, կոոպերատիվներ կամ երիտասարդական խմբեր.** ATP-ն, Կանաչ արահետ ՀԿ-ն նախկինում աշխատել է, Տրանսկովկասյան Արահետ ՀԿ-ն է հիմա արահետ կառուցում, կոոպերատիվ չկա:
- **Համայնքի մասնակցություն որոշումների կայացմանը.** Ժողովների ձևով, անձնական կապերի շնորհիվ են մասնակցում ավելի շատ[19]:

Ամփոփելով համայնքի վերաբերյալ հավաքագրված հիմնական տվյալները՝

Ժողովրդագրություն և սոցիալական դինամիկա. Գյուղն ունի հարուստ պատմամշակութային և բնական ժառանգություն (Աղավնավանք եկեղեցի, Կենու պուրակ): Բնակչությունը հիմնականում զբաղվում է ավանդական գյուղատնտեսությամբ:

[19] Ֆոկուս խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ

Տնտեսական գործունեություն. Անասնապահություն, հողագործություն, էկոտուրիզմի սկզբնավորվող տարրեր (քայլարշավային տուրիզմ):

Ենթակառուցվածքներ. Դեպի պատմամշակութային հուշարձան տանող ճանապարհների և արահետների բարեկարգման անհրաժեշտություն, կապի և ինտերնետի թույլ հասանելիություն, փողոցների լուսավորության անբավարար վիճակ, տաղավարների բացակայություն:

Բնական ռեսուրսներ և ռիսկեր. Կենու եզակի պուրակի պահպանության անհրաժեշտություն, անտառի հարակից տարածքների ոչ ճիշտ օգտագործում:

ՖՄՄ ներուժ. Էկո-տուրիստական ենթակառուցվածքների ստեղծում (արահետների կահավորում, տեղեկատվական վահանակներ), հյուրատների ցանցի զարգացում, կանանց ձեռագործ աշխատանքների վաճառքի կետեր, էներգախնայող փողոցային լուսավորության համակարգի անցկացում, տաղավարների կառուցում:

4.9. Գոշ բնակավայր (Դիլիջան բազմաբնակավայր համայնք, Տավուշի մարզ)

Մակերես՝ 15.4 կմ²
Գոշը հիմնվել է 1840-45թթ.: Առաջին բնակիչները եղել են նախկին Նոյեմբերյանի շրջանի Դոստոլու և Կոթի գյուղերից վերաբնակեցվածները:
Որպես հին բնակատեղի հիշվում է դեռևս 10-11 դարերից: 1178թ. կառուցվել է Գոշավանքի վանական համալիրը: Այն կառուցվել է Մխիթար Գոշի կողմից՝ Իվանե Զաքարյան իշխանի աջակցությամբ: Գոշավանքը եղել է միջնադարյան Հայաստանի հոգևոր և մշակութային խոշոր կենտրոններից մեկը, որտեղ ստեղծվել և պահպանվել են բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր:
Այստեղ են ուսում առել և գործել Վանական վարդապետը և Կիրակոս Գանձակեցին: Գոշավանքը եղել և մնում է որպես համաշխարհային պատմամշակութային գլուխգործոցներից մեկը: Պատահական չէ, որ տարիներ առաջ այստեղ անցկացված միջազգային սիմպոզիումին ներկա են գտնվել աշխարհի բազմաթիվ երկրներից ժամանած 250 գիտնականներ և ճարտարապետներ:
Այժմ Գոշում գործում են միջնակարգ և հիմնական դպրոցները:
1. Հեռավորությունը Երևանից՝ 118 կմ, մարզկենտրոնից՝ 24 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 43 կմ
2. Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1080 մ
3. Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը + 19C է, ձմռանը՝ -2C
4. Պատմամշակութային կոթողներ՝ Գոշավանք
5. Տնտեսությունների թիվը 385 ընտանիք
6. Համայնքի զբաղեցրած տարածքը՝ 1479.56 հա, որից՝ 197 հա արոտներ, 157.10 հա վարելահողեր
7. Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, անասնապահություն
8. Ապահովվածությունը խմելու և ոռոգման ջրով՝ խմելու ջրով բավարար, ոռոգման ջրով անբավարար
9. Գազիֆիկացված չէ /աշխատանքները ընթացքի մեջ են/
10. Ճանապարհների վիճակը՝ բավարար
Համայնքն ունի՝
1. Միջնակարգ դպրոց, հիմնական դպրոց
2. Բուժկետ
3. Համայնքային կենտրոն[20]

[20] ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայք՝ http://tavush.mtad.am/xoshor/

Ֆոկուս խմբային քննարկումների և անհատական հարցազրույցների արդյունքում ստացված տվյալներ՝

- **Բնակչության նվազման կամ աճի միտում (միգրացիա).** Աճ է նկատվել, մոտ 100 անձ է ավելացել, ժամանակավոր բնակվողները հիմնական գրանցում են ստացել:
- **Եկամտի հիմնական աղբյուրները.** Գյուղատնտեսություն, հողագործություն՝ ավելի քիչ, անասնապահութուն, տուրիզմ, հավաքչություն, արտագնա աշխատանք, պետական աշխատանք ունեցողներ (գյուղապետարան, դպրոց, ամբուլատորիաներ-երկու), կարելի է ասել, երկու բնակավայր է տարածքի առումով՝ մեկ բնակավայրի անունի տակ:
- **Միջին ամսական եկամուտը մեկ շնչի հաշվով.** Դժվարանում են պատասխանել:
- **Տեղական վերամշակող ձեռնարկությունների կամ փոքր բիզնեսների առկայություն.** Խանութներ (առևտրի կետեր), հյուրանոցա-հյուրատնային բիզնեսներ՝ մոտ 35:
- **Ճանապարհների, դպրոցների և մանկապարտեզների վիճակը.** Կենտրոնական հատվածն ասֆալտապատ է (նոր է արվել՝պետական բյուջեով), կան տուֆապատված ճանապարհներ (սուբվենցիոն ծրագրով), բետոնային ճանապարհ (համայնքային բյուջեով), երկրորդային փողոցներ կան՝ հողային /գրունտային, կան երկու դպրոցներ՝ հիմնական և միջնակարգ, մանկապարտեզ՝ չկա, նախակրթարան՝ միջնակարգին կից:
- **Համայնքի ապահովվածություն խմելու և ոռոգման ջրով, էլեկտրաէներգիայով և գազով**. Խմելու ջրով ապահովված է մասնակի, բայց ներկայումս սուբվենցիոն ծրագրով ամբողջական ցանցի կառուցման աշխատանք է արվում, ոռոգման ջուր՝ քիչ (մոտ 3հա ընդամենը, նոր է արվել, բնապահպանական ԾԻԳ-ով), էլեկտրաէներգիայով ամբողջությամբ ապահովված է, գազաֆիկացման հետ խնդիր կա, որոշ տարածքներ չի հասնում գազատարը, մոտ 90%-ով է գազաֆիկացված, փողոցային լուսավորություն՝ մոտ 30%-ով է ապահովված:
- **Հեռավորությունը մոտակա բժշկական կենտրոնից**. Կան 2 բուժկետ/ամբուլատորիաներ, Հաղարծինից նույնպես օգտվում են՝ ըստ անհրաժեշտության (15 կմ):
- **Այս պահին համայնքում իրականացվող պետական և միջազգային ծրագրերը**. ջրագիծ, ներհամայնքային որոշ ճանապարհների հենապատերի կառուցում, դպրոցի վերակառուցում՝ մանկապարտեզի հետ՝ պետական ծրագիր:
- **Նախկինում իրականացված ծրագրերի ազդեցությունը համայնքի վրա.** Ռազմավարական Զարգացման Գործակալության հետ համագործակցությամբ՝ սարամիջյան ճանապարհների վերանորոգում, ջրախմոցների տեղադրում և այլն, Տրանսկովկասյան արահետներ ՀԿ-ի հետ են համագործակցել:
- **Հողի օգտագործումը (արոտավայրեր, վարելահողեր).** Վարելահողերը հիմնականում որպես խոտհարքեր են օգտագործվում, արոտավայրեր:
- **Համայնքի հեռավորությունը պահպանվող տարածքից.** Ամբողջությամբ տարածքում է:
- **Տարածքի կենսաբազմազանությունը կամ բնական հարստությունը.** Գոշի լիճ, կովկասյան եղջերուներ՝ Պարզ լճի տարածքում, սունկի տեսակներ, փափուկ և այլն:
- **Համայնքի առավել խոցելի խմբերը (բազմազավակ ընտանիքներ, փախստականներ, հաշմանդամություն ունեցող անձինք).** Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքներ՝ մեկ, այս պահին հաշմանդամություն ունեցող մեկ-երկու անձ, կան բազմազավակ ընտանիքներ:
- **Հարաբերությունները համայնքի տարբեր սոցիալական խմբերի միջև**. Եթե կոնֆլիկտ չի առաջանում, բարիդրացիական:
- **Համայնքում գործող ՀԿ-ներ, կոոպերատիվներ կամ երիտասարդական խմբեր.** ՄԵՄ (Մարզերի երիտասարդները մարզերում)՝ երիտասարդական խումբ
- **Համայնքի մասնակցություն որոշումների կայացմանը.** Ժողովների ձևով՝ համացանցով, ուղղակի կապ հաստատելով[21]:

[21] Ֆոկուս խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ

Ամփոփելով համայնքի վերաբերյալ հավաքագրված հիմնական տվյալները՝

Ժողովրդագրություն և սոցիալական դինամիկա. Բարձր տուրիստական ակտիվությամբ գյուղ (Գոշավանք և Գոշ լիճ): Բնակչությունն ունի ձեռնարկատիրական փորձ:

Տնտեսական գործունեություն. Տուրիզմ, հյուրատներ, հուշանվերների առևտուր, ձիավարության ծառայություններ, հավաքչություն, ինչպես նաև անասնապահություն:

Ենթակառուցվածքներ. Գոշ լճի տարածքի անմխիթար վիճակ, թափոնների կառավարման համակարգի բացակայություն, խմելու ջրի, ոռոգման ջրի, գազաֆիկացման, փողոցների լուսավորության խնդիրներ:

Բնական ռեսուրսներ և ռիսկեր. Գոշ լճի էկոլոգիական ճնշում (աղտոտում, ճահճացում)՝ չկանոնակարգված տուրիզմի պատճառով:

ՖՄՄ ներուժ. Լճի հարակից տարածքի կանաչ կառավարում, էկո-աղբամանների և աղբի տեսակավորման ներդրում, տեղական հուշանվերների արտադրության արդիականացում (երիտասարդների ներգրավմամբ), ջրահավաք ավազանի կառուցում, փողոցային էներգախնայող լուսավորության անցկացում:

4.10. Խաչարձան բնակավայր (Դիլիջան բազմաբնակավայր համայնք, Տավուշի մարզ)

Մակերես՝ 11.1 կմ²
Խաչարձան գյուղը մինչև ազգամիջյան կռիվները կոչվել է Փոլադ և բնակեցված է եղել ադրբեջանցիներով: Փոլադի տնտեսության հետ միևնույն վարչական տարածքում է գտնվել Աղքիլիսա և Մուրթել փոքր գյուղերը (ներկայումս Ճերմակավան և Գեղատափ), որոնք նույնպես ադրբեջանաբնակ են եղել:
1989թ. տարածքը բնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթված հայերով, որից հետո այն անվանվել է Խաչարձան: Այստեղ գործում է միջնակարգ դպրոցը: Բնակչության հիմնական զբաղմունքը եղել և մնում է հողագործությունն ու անասնապահությունը:
Գեղատափ գյուղը ադրբեջանցիների հեռանալուց հետո բնակեցվել է Շահումյանի շրջանից բռնագաղթվածներով: Համայնքն ունի էկոտուրիզմի համար լավագույն բնակլիմայական պայմանները:
1. Հեռավորությունը Երևանից՝ 124 կմ, մարզկենտրոնից՝ 26 կմ, ՀՀ պետական սահմանից՝ 41 կմ
2. Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1050 մ
3. Բնակլիմայական պայմանները՝ գտնվում է բարեխառն գոտում, ամռանը միջին ջերմաստիճանը +20C է, ձմռանը՝ -2C
4. Պատմամշակութային կոթողներ չկան
5.Տնտեսությունների թիվը 105 ընտանիք
6. Համայնքի զբաղեցրած տարածքը՝ 5625.25 հա, որից՝ 403.30 հա արոտներ, 152.04 հա վարելահողեր
7. Բնակչության զբաղմունքը՝ բուսաբուծություն, անասնապահություն
8. Ապահովվածությունը խմելու և ոռոգման ջրով՝ խմելու ջրով բավարար, ոռոգման ջրով անբավարար
9. Գազիֆիկացված չէ
10. Ճանապարհների վիճակը՝ բավարար
Համայնքն ունի՝
1. Դպրոց՝ 150 աշակերտական տեղով

2. Բուժկետ
3. Մշակույթի տուն
4. Համայնքային կենտրոն[22]

Ֆոկուս խմբային քննարկումների և անհատական հարցազրույցների արդյունքում ստացված տվյալներ՝

- **Բնակչության ընդհանուր թիվը, տնային տնտեսությունների քանակը և տարիքային կազմը.** 403 – գրանցված, 360 - առկա բնակիչների ընդհանուր թիվ, 82 – առկա տնային տնտեսությունների թիվ, ընդհանուր՝ 88
- **Բնակչության նվազման կամ աճի միտում (միգրացիա).** Աճ է նկատվում վերջին տարիներին, ինը անձ:
- **Եկամտի հիմնական աղբյուրները.** Անասնապահություն, հողագործությունը քիչ է շատ, շինարարություն, մեղվաբուծություն, արտագնա աշխատանք՝ սեզոնային, պետական աշխատողներ՝ գյուղապետարան, դպրոց, ամբուլատորիա, մանկապարտեզ, կան խանութներ - երկու հատ՝ խառը, հիդրոէլեկտրակայան՝ վեց հոգի աշխատում են - մասնավոր է:
- **Միջին ամսական եկամուտը մեկ շնչի հաշվով.** Դժվարանում են պատասխանել:
- **Տեղական վերամշակող ձեռնարկությունների կամ փոքր բիզնեսների առկայություն.** Խանութներ (առևտրի կետեր) – 2 հատ:
- **Ճանապարհների, դպրոցների և մանկապարտեզների վիճակը.** Ճանապարհներն ասֆալտապատ և տուֆապատ են, կա մեկ դպրոց՝ միջնակարգ - 46 աշակերտով, մանկապարտեզ՝ 18 երեխա, մոբիլ մակապարտեզ - մինչև 13:00-ն է աշխատում, նախակրթարան չկա:
- **Համայնքի ապահովվածություն խմելու և ոռոգման ջրով, էլեկտրաէներգիայով և գազով**. Կենտրոնացված ջրամատակարարում, խմելու ջրով ապահովված է գյուղը (համայնքային է), ոռոգման ջրով հիսուն տոկոսով ապահովված է, էլեկտրաէներգիա, գազաֆիկացում՝ ամբողջությամբ:
- **Հեռավորությունը մոտակա բժշկական կենտրոնից**. Ամբուլատորիա կա գյուղում, սպասարկում է նաև Աղավնավանքին, օգտվում են նաև Իջևանի բժշկական կենտրոնից՝ 27-30 կմ:
- **Այս պահին համայնքում իրականացվող պետական և միջազգային ծրագրերը**. Այս պահին սուբվենցիոն ծրագիր չկա, բնապահպանական ԾԻԳ-ի հետ այս պահին կան ծրագրերի գաղափարներ, Տրանսկովկասյան արահետ ՀԿ-ի հետ՝ քայլարշավային արահետի կահավորում:
- **Նախկինում իրականացված ծրագրերի ազդեցությունը համայնքի վրա.** Կանաչ արահետ ՀԿ-ի հետ մոտ չորս տարի աշխատել են, ճանապարհների տուֆապատում է իրականացվել սուբվենցիոն ծրագրով, կամրջի շինարարություն՝ մասնակցային բյուջետավորմամբ, լուսավորության անցկացում՝ Հայաստան համահայկական հիմնադրամով, արևային ջրատաքացուցիչների տեղադրում, ԾԻԳ-ով ոռոգման ջրագծի կառուցում, 2200 մ, պտղատու այգու տնկում անհատ բնակիչների տարածքներում, ջերմոցների և չրանոցների կառուցում:
- **Հողի օգտագործումը (արոտավայրեր, վարելահողեր).** Հողագործությունը քիչ է, հողերը բերրի չեն, հողակտորները փոքր են, թեքությունը մեծ է, գյուղտեխնիկայի բացակայություն կա, ճանապարհների անանցանելի վիճակ, ավելի շատ որպես խոտհարք է օգտագործվում, արոտավայրերի արածեցման պլան չկա, քառսային է օգտագործվում և քիչ տարածքներ կան:
- **Համայնքի հեռավորությունը պահպանվող տարածքից.** Ամբողջությամբ տարածքում է – 5625 հա:
- **Տարածքի կենսաբազմազանությունը կամ բնական հարստությունը.** Մրգատու ծառեր (հոն, ընկույզ), մասուր, արջ, եվրոպական այծյամ, կարմրախայտ, եղնիկ, փորսուղ/գորշուկ, մացառախոզ/կովկասյան վայրենակերպ, լորենի, ալպիական մարգագետինների տարածքում՝ կովկասյան մայրեհավ, լուսան, վայրի կատու այլն:
- **Համայնքի առավել խոցելի խմբերը (բազմազավակ ընտանիքներ, փախստականներ, հաշմանդամություն ունեցող անձինք).** Քիչ են շատ խոցելի խմբերը, Լեռնային Ղարաբաղից

[22] ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայք՝ http://tavush.mtad.am/xoshor/

տեղահանված ընտանիք չկա, հաշմանդամություն ունեցող՝ մեկ ընտանիք կա, անապահով՝ մեկ ընտանիք (նույն ընտանիքն է):

- **Հարաբերությունները համայնքի տարբեր սոցիալական խմբերի միջև**. Բարի-դրացիական:
- **Համայնքում գործող ՀԿ-ներ, կոոպերատիվներ կամ երիտասարդական խմբեր.** Չկան:
- **Համայնքի մասնակցություն որոշումների կայացմանը.** Քննարկումներին են մասնակցում, անձնական կապերով, զանգում են, էջում դնում են, հետաքրքրված մարդիկ մասնակցում են[23]:

Ամփոփելով համայնքի վերաբերյալ հավաքագրված հիմնական տվյալները՝

Ժողովրդագրություն և սոցիալական դինամիկա. Ներառում է նաև Աղավնավանքի հարակից որոշ տարածքներ. բնակչությունը հիմնականում ադրբեջանահայ փախստականներ են և վերաբնակներ:

Տնտեսական գործունեություն. Անասնապահություն, բանջարաբուծություն (ջերմոցային փոքր տնտեսություններ), մեղվաբուծություն, արտագնա աշխատանք:

Ենթակառուցվածքներ. Համայնքային հանգստի գոտիների/տաղավարների բացակայություն, ոռոգման ջրի ներքին ցանցի անբավարար վիճակ, աղբահանության խնդիր, հանդիսությունների սրահի անբարեկարգ վիճակ:

Բնական ռեսուրսներ և ռիսկեր. Վառելափայտի պահանջարկ, գյուղի տարածքի մոտ 60%-ը համարվում է կարմիր գոտի:

ՖՄՄ ներուժ. Խելացի ջերմոցների հիմնում, այլընտրանքային էներգիայի (արևային կայաններ) ներդրում, մեղվապահության զարգացում, տուրիզմի զարգացում՝ քայլարշավային արահետներ, հյուրատնային գործունեության խթանում, խոնարհված եկեղեցու պոտենցիալի օգտագործում, հանդիսությունների սրահի վերանորոգում, աղբահանության արդիականացում, համայնքային հանգստի գոտիների/տաղավարների ստեղծում:

[23] Ֆոկուս խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ

5. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ[24]

1) **Համայնքի կողմից նշված 3 ամենահրատապ խնդիրները:**

Ֆիոլետովո.

Ճանապարհների անմխիթար վիճակ, աշխատատեղերի բացակայություն, գյուղմթերքի արդյունավետ իրացման խնդիր՝ հարմար պայմաններով, ընդհանուր շուկայական զնաճի պայմաններում տեղական մթերքի գինը ցածր է: Ներկրվող ապրանքները դուրս են մղում տեղական արտադրողին տեղական շուկայից (մրցակցային առավելություններ է պետք սահմանել):

Ծովագյուղ.

Լուսավորության ցանցի անցկացում (էներգախնայող), խաղահրապարակի բացակայություն (թեև համայնքային ենթակայության տարածք չկա), խմելու ջրի ցանցի անցկացում (ծրագրեր կան, որ հատվածական արվում է), կոյուղու համակարգ չկա (քննարկվում է ծրագիր Ասիական զարգացման բանկի՝ ԱԶԲ-ի հետ, 2027-ին նախատեսվում է), ոռոգման ջրի հարց, փողոցների համարակալում և փողոցների անուններով ցուցանակների տեղադրում:

Սեմյոնովկա.

Գյուղի հանդիսությունների սրահի վերանորոգման և կահավորման հարց, բնակչության թվաքանակի ավելացում, կոյուղու հարցի կարգավորում (որը կարող է կարգավորվել պետական միջոցներով, հիմա քննարկվում է), գյուղի տրանսպորտի հարցի կարգավորում՝ Սևան-Սեմյոնովկա, մեկ երթուղային է, երեք անգամ է աշխատում օրեկան, նաև գյուղմթերքի, մասնավորապես՝ կաթի արդյունավետ հանձնում կամ արտադրության հիմնում, որ մարդիկ եկամուտ ստանան, աշխատանք ունենան, մնան գյուղում, կաթի վերամշակման, պանիրի գործարան կամ կարի արտադրամաս հիմնել:

Դիլիջան.

Ծայրամասային թաղամասերում սելավատարների վատ վիճակ (լցված են ամբողջությամբ, սովետական ժամանակներից հետո չեն մաքրվել), համայնքային աղբավայր չունենալու խնդիր (Հաղարծին բնակավայրում է, բայց նորմերին չի համապատասխանում), կրթական-սպորտային կենտրոնների բացակայություն (մարզասրահ, կոլեկտիվ մարզաձևերի պակաս կա, մեծահասակների ժամանցի կենտրոն, կինոդիտում, ցանկալի է նման կոմպլեքս լինի), սողանքի լուրջ խնդիր կա քաղաքի որոշ հատվածներում, տրանսկովկասյան արահետ կա, որը պատշաճ վիճակում չէ ու իրազեկված էլ չեն վերջինիս մասին, քաղաքային միասնական կերպարի/ձեռագրի բացակայություն (միասնական կառավարման պլան չկա) - այս պահին Գրին Ռոք հիմնադրամը ճարտարապետների մասնագիտական խմբի և քաղաքապետարանի հետ համատեղ Դիլիջանի դիզայնն է պատրաստել, թափառող կենդանիների խնդիր (այս պահին Գրին Ռոք հիմնադրամը ևս ստերջացում անում է որոշակի քանակներով, կերակրման հարց է լուծում և այլն): Աղբահանության խնդիր՝ մարդկանց հետ աշխատանք, իրազեկում է պետք, տեսակավորման խնդիր կա (հնարավոր է՝ շարունակվի, համայնքապետարանն ունեցել է պրեսի գործիք, աշխատել է, հիմա տեղյակ չեն): Ծառերի հիվանդություններ՝ կլիմայի փոփոխության հետ կապված, կամ բույսերի, հավաքչությամբ զբաղվողների համար դա ևս խնդիր է: Չնայած շրջակա անտառային հարստությանը, բուն քաղաքային կառուցապատման միջավայրում հանրային կանաչապատ գոտիները և խնամվող պուրակները կազմում են կառուցապատված տարածքի

[24] Ֆոկուս խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ

չնչին մասը, ինչը սահմանափակում է բնակիչների և զբոսաշրջիկների ներքաղաքային հանգստի գոտիները:

Հաղարծին.

Գետի վարարումների հետևանքով բնակիչների գույքի վնասում (հունի փոխում, պատնեշների կառուցում), խմելու ջրի ֆիլտրացում, դպրոցի անմխիթար վիճակ, սպորտի խմբակների բացակայություն (կարատե, քիքբոքսինգ), խաղահապարակների բացակայություն (մեկը կա, բայց անմխիթար է, հուշարձանի տարածքում), աղբահանության վիճակը վատ է (քիչ են աղբամանները, բաց են, թափառող կենդանիները ցրում են աղբը, ստեղծելով հակահիգիենիկ իրավիճակ համայնքում), գյուղապետարանի անմխիթար վիճակ, մաքուր խմելու ջրի խնդիր (համայնքային է):

Թեղուտ.

Աղբահանությունը (աղբամանները բաց են, պետք է փակ լինեն և ցանցապատ, որ կենդանիները չանցնեն, շների և կատուների խնդիրն ավելի է սաստկացել, աղբահանության գրաֆիկը՝ հաճախականությունը նորմալ է), թաղամասերի լուսավորության խնդիր, երեխաների համար չկան խաղահրապարակներ (թեև համայնքապատկան տարածք էլ չկա), համայնքային մշակույթի տան անբարեկարգ վիճակ, երիտասարդների համար հատուկ՝ զվարճանքի և հանգստի տարածքների բացակայություն, ամբուլատորիայի վատ վիճակ, գյուղապետարանի շենքի անբարեկարգ վիճակ (ամեն ինչն այս շենքում է), դպրոցի կողքի ջերմոցի վերագործարկման խնդիր (սածիլներ չկան):

Հովք.

Հանդիսությունների սրահի անբարեկարգ վիճակ, ճանապարհների խնդիր՝ սելավատարերի բացակայությամբ, տրանսպորտի խնդիր՝ Իջևան և Դիլիջան ուղղություններով, մշակույթի տան փլված վիճակ՝ չկա, չի գործում, ջրի ֆիլտրացման խնդիր (թեև այս հարցով արդեն ուզում են զբաղվել), սպորտային և մշակութային խմբակների գործարկում, կոյուղու խնդիր, լուսավորության խնդիր (գլխավոր փողոցում կա միայն), գյուղտեխնիկայի բացակայություն (խոտհնձիչ և այլն), երիտասարդների զարգացման համար համապատասխան միջավայրի բացակայություն, ֆուտբոլի դաշտի բացակայություն:

Աղավնավանք.

Գյուղտեխնիկայի բացակայություն, փողոցների լուսավորություն՝ գրեթե չկա, հեռահաղորդակցության/կապերի խնդիր, թաղամասեր կան, որ գազատարը հեռու է և մարդկանց համար խնդիր է իրենց գումարով անցկացնելը (օրինակ՝ 1,5 մլն գումար է կազմում, որը մարդկանց համար խնդիր է), ինչն էլ անտառահատումների հետ է անմիջապես կապված, մշակույթի տան անմխիթար վիճակ, որը կարող է բարեկարգման դեպքում ծառայել որպես հանդիսությունների սրահ, համայնքային կենտրոն, ժամանցի կենտրոն, վերանորոգման ու կահավորման խնդիր կա, բազմազավակ ընտանիքների մասով խնդիր կա սոցիալական վիճակի հետ կապված (օրինակ՝ ութ երեխա և ծնողազուրկ): Դեպի եկեղեցի տանող ճանապարհին տաղավարների բացակայություն, որտեղ բնակիչները կարող են ցուցադրություն ու վաճառք իրականացնել:

Գոշ.

Կանգառների բացակայություն (համայնքի միջոցներով ուզում են անել արդեն), փողոցների լուսավորություն՝ մասնակի է (բայց այս մասով նույնպես ծրագիր են ներկայացրել), գազաֆիկացում՝ մասնակի, ճանապարհների վերանորոգում (մասնակի է արված), աղբահանության անբավարար վիճակ (աղբամանների պակաս, աղբամանների շրջակայքի հատուկ ցանկապատի բացակայություն, փակ չեն), մշակույթի տունը նորմալ է, խմբակներ կան, կահավորված է, հանդիսությունների սրահ կա, գյուղի կենտրոնում ջրի աղբյուրներ են պետք (այս հարցը երևի համայնքը կլուծի սեփական ուժերով, որ հետագա պահպանության խնդիր չառաջանա), ջրի ակունքներում ջրի կորուստի կանխում, ջրահավաք ավազանի կառուցում (բայց դա բավականին բարդ գործընթաց է, ՇՄԱԳ պետք է անցնել), գետի վրա կամուրջի կառուցման խնդիր:

Խաչարձան.

Աղբահանություն խնդիր (քիչ են շատ, մաշված են և բաց են հիմնականում), բացօթյա հանգստի գոտու/տաղավարով բացակայություն, ոռոգման համակարգի անբավարարություն, հանդիսությունների սրահի անբարեկարգ վիճակ:

2) **Խնդիրների առաջնահերթությունն ըստ բնակչության տարբեր խմբերի** (օր.՝ կանանց, ֆերմերների կամ երիտասարդների համար)[25]:

N	**Բնակավայր**	**Խնդիրների առաջնահերթությունը՝ ըստ բնակչության տարբեր խմբերի**
1	**Ֆիոլետովո**	Կանանց զբաղվածության ապահովում /կարի ֆաբրիկա լինի, կոոպերատիվ և այլն, մասնագիտական զարգացման դասընթացներ
2	**Ծովագյուղ**	Նույնն են խնդիրները
3	**Սեմյոնովկա**	Նույնն են խնդիրները
4	**Դիլիջան**	Տրանսպորտը հարմարեցված չէ, շենքերն էլ մեծամասամբ հարմարեցված չեն, թեև հիմա նոր չափորոշիչներով պարտադիր է կառուցվող կամ վերանորոգվող շենքերը հարմարեցնելը հաշմանդամություն ունեցող անձանց համար
5	**Հաղարծին**	Նույնն են խնդիրները
6	**Թեղուտ**	Նույնն են խնդիրները
7	**Հովք**	Հաշմանդամություն ունեցող երեխայի համար օգնականի հարցի լուծման խնդիր
8	**Աղավնավանք**	Նույնն են խնդիրները
9	**Գոշ**	Անասնապահությամբ զբաղվողների համար՝ կացարանների կառուցում սարատեղիներում
10	**Խաչարձան**	Նույնն են խնդիրները

3) **Ռեսուրսների օգտագործումը տարվա ընթացքում** (օր.՝ արոտավայրերի օգտագործում, ջրի սպառում)[26]:

N	**Բնակավայր**	**Ռեսուրսների օգտագործումը տարվա ընթացքում**
1	**Ֆիոլետովո**	Սեզոնային որևէ առանձնահատկություն չկա
2	**Ծովագյուղ**	Սեզոնային որևէ առանձնահատկություն չկա

[25] Ֆոկուս խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ
[26] Ֆոկուս խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ

3	**Սեմյոնովկա**	Արոտավայրերի արածեցման պլան կա, ըստ դրա են առաջնորդվում, էկոպարեկներն էլ շատ խիստ վերահսկողություն են իրականացնում
4	**Դիլիջան**	Սեզոնային որևէ առանձնահատկություն չկա
5	**Հաղարծին**	Սեզոնային որևէ առանձնահատկություն չկա
6	**Թեղուտ**	Սեզոնային որևէ առանձնահատկություն չկա
7	**Հովք**	Սեզոնային որևէ առանձնահատկություն չկա, հավաքչություն
8	**Աղավնավանք**	Ոռոգման ջուրը սեզոնին շատ է օգտագործվում
9	**Գոշ**	Արածեցման պլան, արոտավայրերի կառավարման պլան կա, բայց դժվար է մարդկանց հետ հստակ պահելը, ավանդույթի համաձայն, անում են՝ ամառային արոտներ, …
10	**Խաչարձան**	Սեզոնային որևէ առանձնահատկություն չկա

4) Մարդ-բնություն կոնֆլիկտները[27]**:**

N	Բնակավայր	Մարդ-բնություն կոնֆլիկտներ
1	**Ֆիոլետովո**	Անցած տարի արջը կերել է կով, գայլերը, աղվեսները, շնագայլերը մտնում են գյուղ երբեմն և վնասում տնային կենդանիներին ու թռչուններին
2	**Ծովագյուղ**	Վերջին տարիներին նման դեպքեր չեն եղել
3	**Սեմյոնովկա**	Գայլերն են հիմնականում վնաս տալիս
4	**Դիլիջան**	Հիմա չկան նման դեպքեր
5	**Հաղարծին**	Եղնիկներ են մտել, բայց խնդիրներ չկան, այլևս որսորդություն, անտառահատումներ չեն արվում
6	**Թեղուտ**	Միայն աղվեսներն են վնասում հավերին, մարդիկ վերջին տարիներին շատ լավ են վերաբերվում շրջակա միջավայրին՝ անտառահատումները քչացել են շատ
7	**Հովք**	Չկան կոնֆլիկտներ
8	**Աղավնավանք**	Հատումներ չկան, էկոպարեկ կա, որսորդություն չկա համարյա, գայլերը, արջերը, շնագայլերը շատ վնաս են տալիս
9	**Գոշ**	Անտառահատումներ՝ չեն արվում, որսորդություն՝ չկա, հավաքչություն՝ քիչ է արվում, վայրի կենդանիների կողմից վնաս, հարձակում՝ միայն ընտանի կենդանիների վրա գայլերի հարձակման դեպքեր կան
10	**Խաչարձան**	Անտառահատումներ չկան, որսորդությունն արգելված է, մեծ մասը, շուրջ վաթսուն տոկոս, կարմիր գոտի է համարվում, հիմա չկա նաև վայրի կենդանիների հարձակում գյուղի տարածքում

5) Կլիմայական փոփոխություններ՝ վերջին 10 տարում (երաշտ, կարկուտ, ջրհեղեղ)[28]:

N	Բնակավայր	Կլիմայական փոփոխություններ
1	**Ֆիոլետովո**	Ջերմաստիճանի փոփոխություններ, կարկուտը ավելի քիչ է, երաշտ լինում է, գետի վարարում (նախորդ տարի)՝ Աղստև, երբեմն ծածկում է դաշտերը, քարաթափում լինում է, հիմա Համայնքների Միավորման հետ պատ է կառուցվում, բայց սխալ տեղ

[27] Ֆոկուս խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ
[28] Ֆոկուս խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ

2	**Ծովագյուղ**	Մեկ անգամ ուժեղ կարկուտ է եկել, ավելի չորային է դարձել կլիման
3	**Սեմյոնովկա**	Կարկուտները շատ են, միշտ էլ եղել են, մառախուղներն են քչացել ավելի, տարիներ առաջ սելավներ եղել են, հիմա՝ չէ
4	**Դիլիջան**	Կլիմայական փոփոխություններ կան, ջերմաստիճանի բարձրացում, կարկուտներն են շատացել, հեղեղ, տեղումներն են շատացել, երաշտի պատճառով ջրի պակաս է առաջանում բնակիչների համար, քամիներն են շատացել ու սաստկացել
5	**Հաղարծին**	Կլիման փոխվել է, տեղումների քանակն ավելացել է
6	**Թեղուտ**	Հիմա ամառվա ամիսները մարտ ամսվա նման են, անձրևները շատ են, ձմեռը ավելի սաստիկ է լինում, կլիման փոխվել է, հեղեղներ (գետի վարարումներ, բավականին մեծ վնասներ)
7	**Հովք**	Կլիմայական պայմանները շատ են փոփոխվել, սեզոնայնությունը փոխվել է, երաշտ է լինում, սողանք
8	**Աղավնավանք**	Երաշտ կա թեթևակի, սեզոնին անձրև չի լինում, մնացածը սովորականի պես
9	**Գոշ**	Կլիման շատ փոխվել է, տեղումների տեսակը ու քանակը, սեզոնները տեղերով փոխվել են, սողանքային հատված կա
10	**Խաչարձան**	Կլիման ամբողջությամբ է փոխվել, ամբողջ երկրում, սեզոնները տեղերով փոխվել են, երաշտ լինում է

6) Համայնքի պաշտպանվածություն կամ պատրաստվածություն այդ ռիսկերին[29]:

N	**Բնակավայր**	**Դիմակայունություն ռիսկերին**
1	**Ֆիոլետովո**	Հողով փորձում են բարիկադ կառուցել, բայց մեծ հաշվով ոչինչ չի արվում
2	**Ծովագյուղ**	Կարիք չկա հակակարկտային կայանի, ցանքս չի արվում, ապահովագրություն՝ վնասված գույքի համար
3	**Սեմյոնովկա**	Ոչինչ չի արվում, մասնավորապես՝ կարկուտների համար
4	**Դիլիջան**	Սողանքների մասով Թալա կոչվող հանդամասում ջրահեռացման համակարգ է դրվել, երկրորդը՝ Ոսկե աղբյուր տարածքում քարաթափման մասով գործ է արվելու, հենապատեր են կառուցվել
5	**Հաղարծին**	Ոչինչ չի արվում
6	**Թեղուտ**	Գետի շուրջ որոշակի պատնեշներ են պատրաստվել համայնքի ուժերով
7	**Հովք**	Ոչ մի բան չի արվում, անհատները սեփական ուժերով ինչ կարողանում, անում են
8	**Աղավնավանք**	Ոչինչ չի արվում
9	**Գոշ**	Այս պահին բան չի արվում, միայն ջրահեռացումներ
10	**Խաչարձան**	Ոչ, հատուկ միջոցներ չեն կիրառվում

7) Համայնքի չօգտագործված պոտենցիալը[30]:

N	**Բնակավայր**	**Համայնքի չօգտագործված պոտենցիալ**
1	**Ֆիոլետովո**	Հիմնականում տուրիզմի առումով, կան մեկ հյուրատուն և մեկ թեյարան, սխալ է ներկայացվում ամեն ինչ, դրա համար վախենում են ներկայանալ և որևէ ծառայություն մատուցել, սխալ է ներկայացվում ինֆորմացիան, փակ են վատ փորձառության պատճառով նաև
2	**Ծովագյուղ**	Որակյալ կադրերի ներուժի օգտագործում գյուղի զարգացման համար

[29] Ֆոկուս խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ
[30] Ֆոկուս խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ

3	**Սեմյոնովկա**	Ձմեռային սպորտաձևերի համար կարող է օգտագործվել, ամենաքիչը վեց ամիս կարող է օգտագործվել, դահուկ և այլն
4	**Դիլիջան**	Հանքային ջրերի գործարանի վերագործարկում, կանոնավոր և մասնագիտական հավաքչություն, բրենդավորում՝ ճիշտ, օրինակ՝ սնկի փառատոն (Գրին Ռոք հիմնադրամը նպատակ ունի սրանով զբաղվելու)
5	**Հաղարծին**	Արվեստի ճյուղերի զարգացում, մասնավորապես՝ քանդակագործություն, մեքենայից լավ են հասկանում (օրինակ՝ էլեկտրական շարժիչից, այլ)
6	**Թեղուտ**	Անասնապահություն, բայց բնակչությունը չի ուզում դրանով զբաղվել, դրա հիմնական պատճառները տնտեսապես ձեռնտու չլինելը, ինչպես նաև տուրիզմի զարգացումն է: Փորձարարական տուրիզմի զարգացումը կարող է պոտենցիալ զարգացող ուղղություն դիտարկվել
7	**Հովք**	Կաթի հանձնման կետ լինի, հեծանվային արահետներ և մրցարշավներ կազմակերպվեն
8	**Աղավնավանք**	Տուրիստական պոտենցիալ, հողերը չեն օգտագործվում նպատակային, անասնապահությունը կարող է ավելի զարգացած լինել և այլն
9	**Գոշ**	Այծաբուծությունը լավ կզարգանար, ջրվեժները կարող են լավ ներկայացվել ու տուրիզմի տեսանկյունից զարգացնել (Հովքի ու Գոշի միջև են գտնվում)
10	**Խաչարձան**	Կա խոնարհված եկեղեցի, որի ներուժը չի օգտագործվում, տուրիզմի զարգացում, քայլարշավների զարգացում, այս պահին չկա ոչ մի հյուրատուն, մեղվապահության զարգացում

8) Տնտեսական աճի համատեղում բնության պահպանության հետ[31]:

N	Բնակավայր	Տնտեսական աճի համատեղում բնության պահպանության հետ
1	**Ֆիոլետովո**	Շատ լավ պահպանվում է բնությունը, թե՛ բնակիչների, թե՛ պատասխանատուների կողմից, հատումներ չեն արվում, համայնքը նույնիսկ տարածք է տրամադրել՝ պահեստային ջրի ռեզերվուարի համար (հրդեհների դեպքերի համար օրինակ), տնտեսական զարգացման առումով՝ տուրիզմի զարգացում, հյուրատնային բիզնեսի զարգացում (բայց խնդիր կա զբոսաշրջիկների և բնակիչների մշակութային ինտեգրման և կոնֆլիկտների պատճառ կարող է դառնալ)՝ հատուկ կրթություն և առանձնահատուկ սպասարկման պայմանների ներդրում, օրինակ՝ կարի արտադրամաս ունենալը
2	**Ծովագյուղ**	Էներգախնայող և արդյունավետ լուսավորության համակարգի անցկացում և արևային վահանակների տեղադրում՝ ծախսածածկման նպատակով
3	**Սեմյոնովկա**	Անտառահատումներ չեն արվում, հավաքչություն չի արվում, որսորդներ չկան: Տուրիզմի զարգացումն է, ամառային (օրինակ՝ մեղուների, ապիտուրիզմ), նաև՝ ձմեռային, ամենից շատ սա է հեռանկարային
4	**Դիլիջան**	Օրինակ՝ անտառը ոչ թե պետք է հատել, այլ օգտագործել տուրիստական նպատակով, ազգային պարկի տարածքում տնտեսական գործունեություն ծավալողները պետք է ճիշտ մշակեն ու խնամեն այդ տարածքը
5	**Հաղարծին**	Օրինակ՝ աղբի վերամշակում, աղբի հավաքում, հանձնում և դրա դիմաց գումարի ստացում (աղբի արդյունավետ կառավարման գործընթաց)
6	**Թեղուտ**	Հիմա տուրիզմն ու բնությունն այդքան էլ համատեղելի չեն, քանի որ տուրիստները շատ են աղտոտում, դրական շարժ կա, բայց շատ չէ (հիմա նաև վճարովի են տալիս տարածքները), մարդկանց պետք է տեղեկացնել, որ օրինակ տվյալ բույսը կարմիր գրքային է և այլն, կարելի է ցուցանակներ դնել, զգուշացնող ցուցանակներ
7	**Հովք**	Արահետներ հանուն փոփոխության կազմակերպության միջոցով բազեների արահետի կահավորում, Դիմաց լեռն է տարածքում, արահետներ կան, կարելի է

[31] Ֆոկուս խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ

		տուրիզմը զարգացնել, որը չվնասի բնության պահպանությանը, բայց եկամուտ բերի գյուղին
8	**Աղավնավանք**	Կանաչ գոտին (հողերի համար) համայնքային է եղել, եթե դրանք տրամադրվեն գյուղացիներին՝ հողագործության համար, ապա շատ լավ կլինի
9	**Գոշ**	Այգեգործություն, ստեղծված արտադրանքը (հավաքչության արդյունքը) պետք է բրենդավորվի և ճիշտ ներկայացվի՝ «Գոշի խոտաբույսեր», օրինակ՝ ուրցի տեսակները
10	**Խաչարձան**	Մեղվապահությունը զարգացնել, որպես էկոլոգիապես մաքուր արտադրանք, քանի որ որակապես շատ լավն է

9) Բնակչության վերաբերմունքը հարևան պահպանվող տարածքին[32]:

N	Բնակավայր	Բնակչության վերաբերմունքը հարևան պահպանվող տարածքին
1	**Ֆիոլետովո**	Բնակչությունը ինքն է կազմակերպում աղբահանությունը, պահպանում են տարածքը՝ հատումներ չեն անում, արժևորում են բնությունը
2	**Ծովագյուղ**	Դրական
3	**Սեմյոնովկա**	Դրական
4	**Դիլիջան**	Հավաքչություն են անում, հատումներ չեն արվում
5	**Հաղարծին**	Դրական
6	**Թեղուտ**	Շատ լավ, դրական
7	**Հովք**	Նորմալ շատ, անտառահատումները կասեցվել են, որսորդությունը թույլատրվող սեզոնին
8	**Աղավնավանք**	Շատ լավ
9	**Գոշ**	Շատ լավ
10	**Խաչարձան**	Հրաշալի

10) Որքանո՞վ է համայնքը վստահում և պատրաստակամ մասնակցելու ՖՄՄ (Ֆինանսական մասնակցային մոտեցման) գործընթացին:

Թիրախային 10 բնակավայրերում իրականացված ֆոկուս խմբային քննարկումները վկայում են, որ բնակչության շրջանում պատրաստակամության մակարդակը բավականին բարձր է, սակայն վստահության մակարդակը կրում է պայմանական բնույթ և ուղղակիորեն կապված է նախկինում ունեցած փորձառության հետ:

Պատրաստակամության բարձր մակարդակ (մասնակցային պոտենցիալ**).** Բոլոր բնակավայրերում բնակիչներն ընդհանուր առմամբ հայտնում են իրենց պատրաստակամությունը՝ անձնական ժամանակ և էներգիա ներդնելու ՖՄՄ գործընթացում: Մարդիկ գիտակցում են, որ սա յուրահատուկ հնարավորություն է սեփական բնակավայրի տնտեսական պասիվությունը հաղթահարելու, նոր աշխատատեղեր ստեղծելու կամ համայնքային որևէ խնդիր լուծելու համար:

Վստահության հարց. Որոշ բնակավայրերում (Ծովագյուղ, Հովք, Սեմյոնովկա, Խաչարձան) առկա է որոշակի թերահավատություն, որը պայմանավորված է նախկինում իրականացված տարբեր ծրագրերի փորձով, երբ համայնքից հավաքագրվել են գաղափարներ, սակայն վերջնական որոշումների կայացման կամ ֆինանսավորման փուլերը եղել են ոչ թափանցիկ: Բնակիչների վստահությունը ՖՄՄ-ի նկատմամբ կախված է երեք հիմնական գործոններից.

[32] Ֆոկուս խմբային քննարկումներ և անհատական հարցազրույցներ

1. **Բացարձակ թափանցիկություն.** Որոշումների կայացման և հայտերի ընտրության կանոնները պետք է լինեն պարզ ու հասանելի բոլորի համար:
2. **Տեսանելի արդյունք.** Վստահության կտրուկ աճ կարող է գրանցվել, երբ հաջողված նախագծերը կդառնան տեսանելի և շոշափելի մյուս համագյուղացիների համար:
3. **Արդարության զգացում.** Մարդիկ պետք է վստահ լինեն, որ խոշորացված համայնքի կենտրոնը (օրինակ՝ Դիլիջանը կամ Սևանը) չի կլանելու հեռավոր և փոքր բնակավայրերի համար նախատեսված ռեսուրսները:

Էթնո-մշակութային առանձնահատկություն (Ֆիոլետովո). Ֆիոլետովո բնակավայրում վստահությունը ձևավորվում է ոչ թե անհատական, այլ հավաքական մակարդակում: Համայնքը պատրաստակամ կլինի լիարժեք ներգրավվել ՖՄՄ գործընթացին այն դեպքում, երբ ծրագրային առաջարկները կհարգեն իրենց ավանդական կենսակերպը և չեն հակասի ներհամայնքային կանոններին:

11) Բնակիչների հիմնական ակնկալիքները ծրագրից:

N	**Բնակավայր**	**Բնակիչների հիմնական ակնկալիքները ծրագրից**
1	**Ֆիոլետովո**	Ջրախմոցների տեղադրում, արևային պանելների շատացում՝ համայնքի ծախսերը քչացնելու համար, տուրիզմի զարգացմանն ուղղված աշխատանքներ
2	**Ծովագյուղ**	Խմելու ջրի, լուսավորության, երեխաների զբաղվածության հարցի լուծում
3	**Սեմյոնովկա**	Հանդիսությունների սրահի վերանորոգում, պանրի գործարան/արտադրություն, տուրիզմի զարգացում, ջերմոցի գործարկում, կարի արտադրամաս (կանանց զբաղվածության ապահովման համար) Մարդկանց տնտեսական վիճակի բարելավման համար կարելի է էնպես անել, որ էժան հոսանքից օգտվեն (արևային վահանակներ) Այս ամենը որ ապահովվի, երիտասարդները կմնան, գյուղն արդեն ծերացած գյուղ է, չդառնա տարիներ հետո սարատեղի
4	**Դիլիջան**	Մնայուն բան լինի, որը պահպանվող լինի և կայուն (երկարաժամկետ ազդեցություն), նաև՝ նորարար գաղափար, բնակչության հնարավորինս շատ խմբեր ու շատ շահառուներ ներառի, էներգախնայող լուծումների առաջարկում (արևային պանելներ): Հիմք դրվի ինչ-որ ավելի մեծ գաղափարի, մեխանիզմ դրվի, պիլոտ անել, որը հետո կշարունակի կա՛մ քաղաքապետարանը, կա՛մ օրինակ ՔՀԿ-ները
5	**Հաղարծին**	Աղբահանության բարելավում, խմելու ջրի որակի բարելավում
6	**Թեղուտ**	Հիմնախնդիրներից գոնե մեկը լուծվի, բնապահպանական ցուցանակների մասով աջակցություն, լուսավորություն, այլ
7	**Հովք**	Հեծանվային արահետներ, մրցարշավների կազմակերպում, կաթի մթերման կետի հիմնում, ջրի ֆիլտրացման խնդրի լուծում, լուսավորության խնդրի լուծում, երիտասարդների համար համապատասխան միջավայրի ստեղծում
8	**Աղավնավանք**	Փողոցների լուսավորության անցկացում, մշակույթի տան վերանորոգում և կահավորում, տաղավարների կառուցում
9	**Գոշ**	Աղբահանության հարցի լուծում, լուսավորության համակարգի անցկացում, հավաքչության արդյունքների բրենդավորում
10	**Խաչարձան**	Աղբահանության խնդրի լուծում, բացօթյա հանգստի գոտու/տաղավարով կառուցում, հանդիսությունների սրահի բարեկարգում, մեղվապահության զարգացում

5.1. Սոցիալ-էկոլոգիական փոխառնչություններ և բնակչության կախվածությունը «Դիլիջան» ազգային պարկի էկոհամակարգից

Թիրախային 10 բնակավայրերի սոցիալ-տնտեսական կենսունակությունն ուղղակիորեն շաղկապված է շրջակա բնական միջավայրի և հատուկ պահպանվող տարածքների էկոլոգիական ստատուս-քվոյի հետ: Գնահատումը կրկին մատնանշեց մի կարևոր օրինաչափություն. ***որքան ցածր է բնակավայրի ենթակառուցվածքային հագեցվածությունը (գազիֆիկացում, ջրամատակարարում, ճանապարհներ) և սոցիալ-տնտեսական ակտիվությունը, այնքան բարձր է բնական (հատկապես՝ անտառային և ջրային ռեսուրսների) վրա էկոլոգիական ճնշումը:***

Անտառային ռեսուրսներից կախվածության շղթա (Դիլիջան բազմաբնակավայր համայնք և Սեմյոնովկա). Չնայած «Դիլիջան ազգային պարկի» առկայությանը և օրենսդրական սահմանափակումներին, ինչպես նաև գնահատման գործընթացում ներգրավված բնակիչների հավաստիացումներին, անտառը պոտենցիալ ունի մնալու թիրախային գյուղական բնակավայրերի (հատկապես՝ Սեմյոնովկա, Հովք, Թեղուտ, Խաչարձան) ջեռուցման հիմնական կամ միակ մատչելի աղբյուրը: Սա կարող է հանգեցնել նրան, որ բնակչությունը ստիպված լինի տարեկան հսկայական ծավալի թափուկ կամ անօրինական կերպով ձեռք բերված վառելափայտ սպառել: Սա ոչ թե էկոլոգիական գիտակցության պակասի, այլ «էներգետիկ աղքատության» արդյունք է: Երբ ընտանիքի եկամուտը թույլ չի տալիս վճարել էլեկտրաէներգիայի կամ գազի համար (իսկ Սեմյոնովկայի պես բարձրլեռնային գոտում ձմեռը տևում է 5-6 ամիս), անտառը հաճախ շարունակում է մնալ գոյատևման միակ երաշխիքը:

Արոտավայրերի դեգրադացիա և անասնապահություն. Ծովագյուղում, Սեմյոնովկայում և Հովքում հիմնական եկամտի աղբյուրը էքստենսիվ անասնապահությունն է: Սակայն, համայնքային կառավարման ցածր արդյունավետության պատճառով, չի իրականացվում արոտների հերթափոխային արածեցում: Գյուղամերձ արոտավայրերը ենթարկվում են խիստ գերարածեցման և էրոզիայի, մինչդեռ հեռագնա արոտները (որոնք հաճախ սահմանակից են Ազգային պարկի բարձրլեռնային գոտիներին) մնում են թերօգտագործված՝ ճանապարհների անմխիթար վիճակի պատճառով: Սա ստեղծում է փակ շրջան. անասունների մթերատվությունն ընկնում է, հողերը դեգրադանում են, իսկ ֆերմերները հայտնվում են տնտեսական լճացման մեջ:

Ջրային ռեսուրսների և տուրիզմի հակասությունը (Գոշ, Դիլիջան). Գոշ լճի և Գոշավանքի շրջակայքում տուրիստական անկանոն հոսքերը լուրջ էկոլոգիական ճնշում են առաջացնում: Տեղական բնակչությունը, փորձելով արագ եկամուտ ստանալ (ձիավարություն, ժամանակավոր տաղավարներ), հաճախ խախտում է ազգային պարկի և բնակավայրերի տարածքի էկոհամակարգի հավասարակշռությունը (թափոններ, կոյուղաջրեր): Սա երկարաժամկետ կտրվածքով վտանգում է հենց սպասարկման ոլորտում գործունեություն ծավալողների տնտեսական գործունեությունը, քանի որ օրինակ լճի ճահճացումը կամ աղտոտումը կհանգեցնի տուրիստական գրավչության կորստի:

5.2. Համայնքների կողմից նույնականացված առաջնահերթություններ և մարտահրավերներ

Բոլոր 10 բնակավայրերում անցկացված ՖԽՔ-ների համադրումը թույլ է տալիս առանձնացնել հետևյալ ընդհանուր խնդիրները.

Ջրային ռեսուրսների ճգնաժամ. Ոռոգման ջրի ցանցերի բացակայությունը կամ ոչ բավարար վիճակը և կլիմայի փոփոխությունները հանգեցնում են բերքատվության անկման: Մաքուր խմելու ջրի հասանելիությունը սահմանափակ է թիրախ մի շարք բնակավայրերում (Հովք, Հաղարծին, Թեղուտ և այլն):

Էներգետիկ կախվածություն անտառից. Գազիֆիկացման բացակայությունը կամ վառելիքի բարձր գինը (ցածր վճարողունակությունը) ստիպում են թիրախ որոշ բնակավայրերի բնակչությանը ձմռանը մեծ քանակությամբ վառելափայտ օգտագործել, ինչն ուղղակի հարված է «Դիլիջան ազգային պարկի» էկոհամակարգին:

Իրացման շուկաների և արժեշղթաների թերզարգացվածություն. Տեղական արտադրանքը (կաթ, միս, մեղր, կաղամբ) հաճախ վաճառվում է վերավաճառողներին՝ ցածր գնով, քանի որ չկան սառնարանային և պահպանման տնտեսություններ, ինչպես նաև իրացման մշակված ռազմավարություն կամ քաղաքականություն:

5.3. Ռեսուրսների օգտագործման սեզոնային և տարածական օրինաչափություններ

Գարուն-Ամառ. Ակտիվանում է անասնապահությունը (մեկնում սարեր՝ արոտավայրեր), ինչը բերում է արոտների գերարածեցման: Ամռանը տուրիստական գերբեռնվածություն է նկատվում հիմնականում Դիլիջանում, Հաղարծինում և Գոշում:

Աշուն-Ձմեռ. Անցում անտառի բարիքների հավաքմանը (աշուն) և վառելափայտի պատրաստմանը (ձմեռ): Ձմռանը բարձրլեռնային գյուղերը (Սեմյոնովկա, Հովք) տնտեսապես պասիվանում են:

5.4. Բնապահպանական և կլիմայական ռիսկեր

Կլիմայի փոփոխություն. Տեղումների քանակի նվազում, երաշտներ, կարկուտներ:

Էկոլոգիական ճնշում. Անտառհատումներ (նախորդ տարիների համեմատ շատ քիչ է և կանոնակարգված՝ ըստ բնակիչների), Սևանի ավազանի և Գոշ լճի աղտոտում պլաստիկով և կենցաղային թափոններով:

Թիրախային տարածքի ՈՒԹՀՍ (ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և սպառնալիքներ) SWOT Վերլուծություն

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ (Strengths)

- «Դիլիջան ազգային պարկի» և Սևանա լճի հարևանությամբ պայմանավորված՝ բարձր ազգային և միջազգային ճանաչելիություն և էկո-ներուժ:
- Ավանդական արհեստների և հավաքչության (դեղաբույսեր, սունկ) պահպանված հմտություններ բնակչության շրջանում:
- Ֆիոլետովոյի և Գոշի նման բնակավայրերում առկա բացառիկ մշակութային և պատմական բրենդներ:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ (Weaknesses)

- Էներգետիկ բարձր կախվածություն անտառից (գազիֆիկացման բացակայություն կամ ցածր հասանելիություն):
- Ոռոգման և խմելու ջրի ներքին ցանցերի մաշվածություն /անբավարար վիճակ:
- Կանանց և երիտասարդների ցածր ներգրավվածություն ֆորմալ տնտեսական որոշումների կայացման մեջ:
- Սառնարանային և պահպանման ենթակառուցվածքների բացակայություն, ինչը արժեզրկում է գյուղմթերքը:
- Թափոնների կառավարման խնդիրներ մի շարք բնակավայրերում (Դիլիջան բազմաբնակավայր համայնք):

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Opportunities)

- ՖՄՄ մասնակցային մրցույթների միջոցով սեփականատիրության զգացումի արմատավորում բնակիչների մոտ:
- Կանաչ և էներգախնայող տեխնոլոգիաների (արևային պանելներ, էներգախնայող լուսավորության համակարգեր, ջերմոցներ) ներդրում, որը կնվազեցնի ծախսերը:
- Էկոտուրիզմի և ագրոտուրիզմի սիներգիա (օրինակ՝ քայլարշավային երթուղիներ Դիլիջանից դեպի Սեմյոնովկա և Ծովագյուղ կամ հեծանվային երթուղիներ՝ Հովք և մրցարշավներ):
- Տեղական էկո-արտադրանքի բրենդավորում միջազգային շուկայի համար:

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ /ՎՏԱՆԳՆԵՐ / ՌԻՍԿԵՐ (Threats)

- Կլիմայական փոփոխություններ՝ երաշտներ և սելավներ, որոնք վտանգում են էքստենսիվ գյուղատնտեսությունը:
- Երիտասարդ աշխատուժի շարունակական արտահոսք բնակավայրերից (հատկապես Հովքից ու Սեմյոնովկայից):
- Անտառների դեգրադացիա, ինչը կարող է հանգեցնել սողանքների ակտիվացման (օր.՝ Հովք գյուղում):
- Զբոսաշրջային անկանոն աճ, որը կարող է աղտոտել տեղական էկոհամակարգերը (Գոշ լիճ):

6. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԻԿՐՈ-ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

ԱԳԳ-ի ընթացքում բնակիչների կողմից առաջարկվել են տարբեր գաղափարներ, որոնց մասին տեղեկատվությունը տրված է վերևում, այդ թվում՝ նաև հետևյալ նախնական ծրագրային ուղղությունները, որոնք լիովին կարող են համապատասխանել ՖՄՄ չափանիշներին.

Բնակավայր	Ծրագրի գաղափար	Ոլորտ	Բնապահպանական / սոցիալական ազդեցություն
Սեմյոնովկա	Տնտեսությունների ջերմամեկուսացում և արևային ջրատաքացուցիչների տեղադրում	Այլընտրանքային էներգիա	Նվազեցնում է անտառհատումների ծավալը ձմռանը:
Ֆիոլետովո	Կաղամբի թթվեցման արտադրամասի արդիականացում և էկո-տուրիստական կենտրոն	Էկոտուրիզմ / Գյուղատնտեսություն	Ավելացնում է եկամուտները, պահպանում մշակութային ժառանգությունը:
Գոշ, Աղավնավանք	Էկո-արհեստների կահավորում, կանաչ կայանատեղիներ և թափոնների տեսակավորում	Կայուն տուրիզմ	Նվազեցնում է էկոլոգիական ճնշումը լճի և պուրակի վրա:
Թեղուտ, Հաղարծին	Անտառի բարիքների (սունկ, հատապտուղներ) չորացման և փաթեթավորման կանանց կոոպերատիվ	Այլընտրանքային ապրուստ	Բարձրացնում է կանանց զբաղվածությունը, նվազեցնում անտառահատումը:
Հովք, Խաչարձան	Ոռոգման ջրի խելացի կառավարում (կաթիլային համակարգեր, արևային պոմպեր)	Կայուն գյուղատնտեսություն	Խնայում է ջրային ռեսուրսները, վերականգնում է չորացող հողերը:

6.1. Միկրո-ծրագրերի երկարաժամկետ կայունության և ռիսկերի գնահատման մոդել

Որպեսզի ՖՄՄ շրջանակներում ֆինանսավորվող համայնքային միկրո-ծրագրերը ֆինանսական աջակցության ավարտից հետո չդադարեն գործել (ինչը հաճախ պատահում է գյուղական ծրագրերում), անհրաժեշտ է ներդնել միմյանց հետ փոխկապակցված կայունության եռաչափ մոդել, որն իր մեջ ներառելու է հետևյալ կոմպոնենտները՝ կայունություն և երկարաժամկետություն, ինչպես նաև էկոլոգիական ազդեցության գնահատում («կանաչ ֆիլտր»):

7. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մասնակցության մակարդակ. ԱԳԳ հանդիպումներին կանանց մասնակցությունը եղել է միջին ակտիվության: Ֆիոլետովոյում կանայք ավելի պասիվ էին ընդհանուր քննարկումներում՝ ավանդական մշակութային նորմերի պատճառով, սակայն առանձին զրույցներում հայտնել են կարևոր մտքեր տնայնագործական աշխատանքների վերաբերյալ:

Գենդերային կարիքներ. Կանանց հիմնական կարիքները կապված են տնային աշխատանքի թեթևացման (ջուր, ջեռուցում) և ճկուն զբաղվածության հնարավորությունների ստեղծման հետ (ձեռագործություն, սննդի վերամշակում):

Ներառականության բացեր. Երիտասարդները ունեն բարձր ներուժ տեխնոլոգիաների և էկոտուրիզմի ոլորտում, սակայն հաճախ այդքան էլ լսելի չեն գյուղական «ավագներ»-ի կողմից: ՖՄՄ մրցույթների ժամանակ լավ կլինի սահմանել հատուկ քվոտաներ կամ լրացուցիչ միավորներ երիտասարդների և կանանց կողմից ներկայացված ծրագրերի համար:

Հետևություններ ՖՄՄ-ի համար՝ եթե ծրագրերի հայտերի ընդունումը թողնվի սովորական մեխանիզմների հույսին, ապա շատ հնարավոր է, որ կանայք և երիտասարդները պարզապես չեն դիմի՝ ինքնավստահության կամ տեղեկատվության պակասի պատճառով: Այս պարագայում խիստ ցանկալի է կիրառել պոզիտիվ խտրականության գործիքներ (օրինակ՝ լրացուցիչ 5 միավոր այն միկրո-ծրագրերին, որոնք ղեկավարվում են կնոջ կամ երիտասարդի կողմից, կամ ուղղակիորեն լուծում են նրանց զբաղվածության խնդիրը):

8. ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖՄՄ ԴԻԶԱՅՆԻ ՀԱՄԱՐ

1. **Մրցույթի թեմատիկ ուղղությունները.** ՖՄՄ համայնքային մրցույթները կարելի է բաժանել 3 հստակ լոտերի՝

Լոտ 1: Էներգաարդյունավետություն և այլընտրանքային էներգիա (հատկապես չգազիֆիկացված գյուղերի համար):

Լոտ 2: Կայուն էկոտուրիզմ և ագրոտուրիզմ:

Լոտ 3: Կանաչ գյուղատնտեսություն և արժեշղթաների զարգացում:

2. **Բնապահպանական երաշխիքներ.** Բացառել այն ծրագրերը, որոնք ենթադրում են անտառի բնափայտի լրացուցիչ օգտագործում, քիմիական պարարտանյութերի կիրառում կամ աղտոտում են ջրային ավազանները: Ազգային պարկի տարածքում իրականացվող բոլոր գործողությունները պետք է համաձայնեցվեն պարկի տնօրինության հետ:

3. **Կարողությունների զարգացում.** Մինչ մրցույթի մեկնարկը, բնակիչների համար իրականացնել «Ծրագրերի մշակման» դասընթացներ, քանի որ գյուղական բնակավայրերում հատկապես ծրագրային հայտեր մշակելու հմտությունները թույլ են կամ բացակայում են:

ՖՄՄ ծրագրային ցիկլի սխեմա, որը ցույց է տալիս, թե ինչպես է ԱԳԳ (RRA) գնահատումը վերածվելու կոնկրետ գործողությունների: Ծրագրային հաջորդական ցիկլը պետք է ներառի հետևյալ 5 փուլերը.

1. **Կարողությունների հզորացում.** Բնակավայրերում ծրագրերի մշակման դասընթացների կազմակերպում:
2. **Մասնակցային գաղափարների հավաքագրում.** Համայնքային աշխատանքային խմբերի կողմից տեղական ռեսուրսների վրա հիմնված նախագծերի մշակում (օրինակ՝ էկո-արհեստանոցներ և տեքստիլի էկո-արհեստանոցներ):
3. **Ճկուն ֆինանսավորման մրցույթ.** Դրամաշնորհների տրամադրում՝ խոցելի բնակավայրերի (Սեմյոնովկա, Խաչարձան) համար սահմանելով ցածր և հասանելի համաֆինանսավորման շեմ (10-15%) կամ բացառելով համաֆինանսավորման պահանջը:
4. **Էկոլոգիական և վարչական համաձայնեցում.** «Դիլիջան ազգային պարկի» տնօրենության և ՏԻՄ մարմինների/վարչական նստավայրերի հետ նախագծերի էկո-ռիսկերի զրոյացում:
5. **Մասնակցային մոնիթորինգ.** Համայնքի ակտիվ խմբերի ներգրավում ծրագրերի ընթացքի և կայունության վերահսկման գործում:

ԱԳԳ (Ավարտված)

↓

Համայնքային իրազեկում և ուսուցում (կանանց և երիտասարդների թիրախավորում)

↓

Գաղափարների հավաքագրում: Մրցութային հայտերի ընդունում (էներգախնայողություն, էկոտուրիզմ, կանաչ գյուղատնտեսություն)

↓

Գնահատում «Կանաչ Ֆիլտրով» (բնապահպանական երաշխիքների ստուգում)

↓

Միկրո-ծրագրերի ֆինանսավորում և համաֆինանսավորում (տեղական ներդրում 10-15%)

↓

Մասնակցային մոնիթորինգ

Հավելվածներ.

- *Բնակավայրերի ՖԽՔ մասնակիցների ստորագրված ցուցակներ:*
- *ԱԳԳ դաշտային լուսանկարների բազա:*